Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 470 — ՇԱԲԱԹ 27 ՅՈՒԼԻՍ 1885 — (Ն. Տ.) 8 ՕԳՈՍՏՈՍ 1885 — 27 ՇԷՎՎԱԼ 1302

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂԱՐԿԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գիւղաց	Համար	Տարեկան	գահեկան արժէք 200
»	»	Վեցամսեայ	» » 400
»	»	Չորսամսեայ	» » 50
Դուռտուռաց	Համար և տեղական Թղթատարով տարեկան		» 240
Դուռտուռաց	Համար և տեղական Թղթատարով վեցամսեայ		» 120
Օտար	երկրներու	Տարեկան	Ֆրանք 56
»	»	Վեցամսեայ	» 28

Դուրս գրկուած լրագրոց համար ծախքը հնօրէնութեան վրայ է։
Խմբագրութեան գրկուած ձեռագրեր և Անամակ կամ գրութիւն եռ չ'տրուիր։

ՓԱՆՈՒՑԴՈՒՆԵՐ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԴԲՐԷ ԷՃԷՆՍԻ
Գործակալութեան ձեռամբ, Գալաթայ, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ
ՈՒՐԲԱԹ, 26 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՔԱՆԱՏԱ. Հեռագիրը ծանոյց թէ ի Բէճինա (Քանատա) անգլ. դատարանն ի մահ դատապարտած է զԼուի Բրիէլ, գլուխ ապստամբութեան Մեստիներու, որք՝ ինչպէս յայտնի է՝ որոշ ցեղ մ'են, սերեալ նախկին Ֆրքանացի գաղթականներու և բնիկ Քանատացիներու միութենէն։ Մինչդին անգլ. զօրավարը ընկճած էր զայս շարժում՝, և բռնած էր ապստամբապետը։

Քանատայէն անգլ. լրագրաց ուղղեալ հեռագրերէ հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք դատաստանին վրայ։

Անգլ. կառավարութեան փաստաբանը բաղմաթիւ վկայութիւններ ու փաստեր մէջ բերին ապացուցանելու համար թէ Լուի Բրիէլ իրօք գլուխն էր ապստամբութեան, թէ նա կուտար ամեն հրամաններն, և թէ Պադոշի վերջին ճակատամարտներուն մէջ նա կը հրամայեր։

Ամբաստանեալց փաստաբանը սա փաստը գործածեցին թէ Լուի Բրիէլ, երբ տէր էր իր խելքին, սահմանադրական յուզում մը միայն կը յարուցանէր ի պաշտպանութիւն հողային և այլ իրաւանց Մեստիներու, բայց երբ իր խելք խանգարեցաւ, պատերազմական միջոցներու դիմեց։

Միտլքէն զօրավարը վկայութիւն տուաւ պատերազմին ընթացից վրայ։ Լուի Բրիէլ հարցաքննեց բոլոր վկայներն, և զայրոյթ յայտնեց իր փաստաբանաց դէմ որք բոլոր պաշտպանութիւնը կը յենուն իր յիմարութեան փաստին վրայ։ Բրիէլ դժուարաւ հանդարտեցաւ։

Օրկու Քանատացի բժիշկներ Բէճինա եկած էին, և կը վկայէին թէ Բրիէլ իր խելաց տերը չէր։

Ամբաստանիչ փաստաբանը, ականատես վկաներ բերէրէն յետոյ, որք կը հաստատէին թէ Բրիէլ ապստամբաց գլուխը կը գտնուէր, 20ի չափ պաշտօնագրեր հանեցին, ամենքն ալ Բրիէլի ձեռագիր, որովք հրաւէր կը կարդար Մեստիներուն և Քանատացի բնիկ վարիներուց (Հնդկաց)՝ միանալ ապստամբաց հետ և յարձակիլով բերդերու և շտեմարաններու վրայ, կողոպտել ամեն ինչ։ Միտլքէն զօրավարն իր վկայութեան մէջ բաւ թէ յանկարծակեալ մտաց տէր ան կը նկատէր զԲրիէլ։

Հափիւզնեան Ցիմբանոցին Տնօրէն Տոքդ. Ուօլէյս վկայեց թէ ինք մօտէն դիտած էր ամբաստանելոյն ընթացքն, և յիմարութեան հետ չէր տեսած, կը կարծէր թէ Բրիէլի միտքը կատարեալ առողջ էր։ Բրիէլ դայր լսելով, ոտք ելաւ և շնորհակալութիւն յայտնեց Տոքդ. Ուօլէյսի իր վկայութեան համար։ Յետոյ սաստիկ վէճ մ'ունեցաւ իր փաստաբանաց հետ։

Բայց այս վերջինք իրրև վկայ բերին քանի մը քահանայներ և ուրիշ մարդիկ, որք հաստատեցին թէ Բրիէլի ընթացքը խելացի մարդու գործ չէր ապստամբութեան միջոցի։ Բրիէլի ժամանակաւ Ցիմարանոց մը մնած լինելն ապացուցուեցաւ։

Փաստաբաններէն յետոյ ինք խօսք առնելով, Բրիէլ նախ աղօթեց իր դատաւորաց, երդուելոց, փաստաբանաց և ընդհանուր ունկնդրաց համար։ Յետոյ յայտարարեց թէ երկնաւոր պաշտօն ունէր Մեստիներուն օգնութեան հասնելու, և եթէ կախուէր, իր պաշտօն պիտի կատարուէր։ Բրիէլ ինքզինք Նոր Աշխարհին և Նոր Եկեղեցւոյ մը մարգարէ հռչակեց։ Երկու ժամ խօսելէ յետոյ, վերջացուց՝ կարդալով թուղթ մը որ կը բովանդակէր այն պատճառներ որովք անպարտ արձակուիլ կը խնդրէր։

Երդուեալք յանցաւոր ճանչեցին զԲրիէլ։ բայց աղերսագիր մը ստորագրեցին որով Բրիէլի կենաց շնորհումը կը հայցեն Վ.Հ. Թագուհիէն։

Դատարանն ի կախաղան հանուելու դատապարտեց զԲրիէլ, որ անմիջապէս յայտարարեց թէ վերաքննութեան պիտի դիմէ։

ԱՆԳԼԻԱ. Խորհրդարանը կը զբաղի քննութեամբ օրինական ծրագրոյ մը, որոյ նպատակն է Օրէնքն եւս առաւել խստացնել ընդդէմ անոնց որք դեռահաս աղջիկներ կը հրապուրեն ամօթալից նպատակներով։ Այսպիսի ծրագիր մը քանի մը տարիներէ հետէ կար Խորհրդարանին առջեւ, և Բէլ Մէլ Կազէթի ծանուցեալ հրատարակութիւնը կը փութացնեն անոր քննութիւն։ Եռանդոտ Երեսփոխան մը, Պ. Թալբոտ, առաջարկեց խորագոյն պատիժն աւելցնել չղթայակապ աշխատութեան պատժոյն, որ պիտի տրուի ամեն անձի որ 13 տարեկանէ վար աղջիկ մը հրապուրէ։ Կառավարութիւնն ընդունեց Պ. Թալբոտի առաջարկն, որ սակայն 91ի դէմ 123 քուէով մերժուեցաւ։ Երեսփոխան մը օրինակներ մէջ բերաւ, ապացուցանելով թէ դեռահաս աղջիկներ անհիմն ամբաստանութիւններ ըրած էին պատուաւոր անձերու դէմ և անոնց բանտարկութեան պատճառ եղած, բայց յետոյ նոր քննութիւն կատարուելով, բանտարկելոց անմեղութիւնը ճանչուած էր։ Եթէ որոշեալ պատիժը խարդախի պատժոյն պէս (որ անմիջապէս կը տրուի) անդարմանալի պատիժ մը լինէր, աւելի մեծ անիրաւութիւն մ'եղած պիտի լինէր պատուաւոր մարդիկներու որք թշնամութեան մը զոհ եղած էին։ Բայց 71ի դէմ 179 քուէով ընդունուեցաւ ուրիշ յօդուած մը, որուն համեմատ երկամեայ չղթայակապ աշխատութեան պատիժն հրաւիրող ոճիր մ'է 16 տարեկանէ վար աղջիկ մը հրապուրելը Նաև, եթէ հրապուրիչը 16 տարեկանէն վար է, խաբողանի պատիժ կընայ տնօրինել դատարանն, և միանգամայն հրամայել որ մանկահասակ սրիկայն բարեկարգական դպրոց մը դրուի։ Նոր օրէնքին գլխաւոր տրամադրութիւնն այն է որ մինչեւ 16 տարեկան հրապուրուած աղջկանց պատիւը պաշտպանելու համար բացառիկ խստութեամբ պատիժներ կը տնօրինէ հրապուրիչներուն դէմ։ Պ. Կլատսդոն որ բացակայ էր, նամակ մը գրած էր, յանձնարարելով որ Օրէնքը պաշտպանէ մինչեւ 18 տարեկան աղջիկները։ Բայց այս յանձնարարութիւն չընդունուեցաւ, առարկուելով թէ 18 տարեկան աղջիկ մը, ինքն իսկ մարդ մը հրապուրելու համար, կընար համարել զնա թէ 20 տարեկան էր, և ժամանակ մը կենակցելէ յետոյ, յայտնել իր ճշմարիտ տարիքը, կամ կառավարութեան յանձնելու համար զնա, կամ դրամ կորզելու առիթ մ'ընելու համար ոճիր մը, զոր հրապուրեալ այրն անգիտութեամբ գործած էր։ Երեսփ. ժողովն այս փափուկ խնդրոյ վրայ աչխատեցաւ նոր օրէնքներ գտնել, առաջի աչաց ունենալով երկու տարբեր չարիքներ. մին է՝ անչափահաս աղջկանց վրայ հարստութեան զօրութեամբ գործուած ամօթալի բռնութեան գործերը, զորս նշանակեց Բէլ Մէլ Կազէթ։ Արդ, մինչև 13 տարեկան աղջկանց դէմ այդպիսի գործեր՝ իբրեւ եղեռն նկատուելով՝ ամենածանր պատիժներ պիտի հրաւիրեն գործողաց վրայ։ 13է մինչև 16 տարեկան աղջկանց դէմ եղածներն ալ՝ դարձեալ ոճիր նկատուելով՝ քիչ մը թեթեւ պատիժներ պիտի հրաւիրեն։ Բայց միւս չարիքն է՝ տատանայամիտ աղջկանց ոմանց կողմէ պատուաւոր անձանց դէմ եղած զրպարտութիւնը ու սպառնալիքը, որոց դէմ այդ անձանց պատիւը պաշտպանելու հոգն ևս առնելով, Խորհրդարանը չուզեց 16 տարեկանէ վեր եղած աղջկանց կամ կանանց պատիւը պաշտպանելու համար բացառիկ օրէնք դնել, նկատելով թէ 16 տարեկանէ վեր ամեն աղջիկ ինքզինքը խելքն ունի այլ եւս։ Բայց իրաւամբ դիտել տուաւ Լոնտոնի Բարգաքաղաքը թէ, լաւ է օրէնք դնել, բայց կարեւոր բան է դրուած օրէնքը գործադրել տալ ոստիկանութեան, — «Եւ հասարակութիւն», կը յարէ Թայմս։

Քէմպրիճի Համալսարանին դասախօս Պ. Ճէյմս Սդիւարդ Երեսփ. ժողովոյն ներկայեց «Փրկութեան Բանակին» անդամց և կուսակցաց կողմէ պատրաստեալ և 393,000 ստորագրութեամբք ծածկեալ անհեթեթ աղերսագիր մը, որով Պետութեան պաշտպանութիւնը կը խնդրուի անգլիացի մանկահասակ աղջկանց համար մինչեւ 18 տարեկան։ Փրկութեան բանակը զայս աղերսագիր Երեսփոխանաց ժողովոյն բերաւ մեծ թափոր մը կազմած։ Աղերսագիրը փաթթուած էր մեծ գլանի մը և քառածի կարգի մը վրայ դրուած, որոյ վրայ կը կարդացուէր սա արձանագրութիւն. «Ցանուն Աստուծոյ, յանուն ժողովրդեան և յանուն Թագուհւոյն՝ մեր Անգլիոյ, Փրկութեան Բանակը կը խնդրէ որ այս անիրաւութիւնը վերջ դրուի։» Ըստ պահանջման Պ. Սդիւարդի, աղերսագիրը կարդացուեցաւ յատեան ժողովոյ, դեռահաս աղջկանց պաշտպանութեան վրայ կառավարական ծրագրոյն վիճաբանութեան սկիզբն։

* * *

Այս ծրագրոյ քննէարկութիւնը դրեթէ վերջին գործը պիտի լինի Երեսփոխանաց ժողովոյն, որ ընտրուած էր 1880ին։ Ժողովը այսօր պիտի փակուի, եթէ երեկ իրիկուն չէր փակուած։ և այլ ևս իր այժմեան անդամներով չպիտի գումարի։ Սեպտեմբերի մէջ պաշտօնապէս պիտի արձակուին իրենց պաշտօնէն, Երեսփոխանաց ժողովոյն լուծմամբ, և այնուհետեւ այն Երեսփոխանք որ կ'ուզեն անդամակցիլ նոր Խորհրդարանին, ճառեր պիտի խօսին իրենց ընտրողաց առջեւ, ջանալով վերագրաւել նոցա վստահութիւնն։ Ընտրական մեծ պայքարն ի մէջ երկուց մեծ կուսակցութեանց՝ այն ատեն պիտի սկսի։ Բայց մինչեւ այն ատեն, նախարարք և ընդդիմադիրք պիտի ցրուին, և ընդհանուր արձակուրդ պիտի վայելեն։ Լորտ Սալիսպըրի պիտի երթայ Ֆրանսայի մէջ ունեցած դղեակը, Պ. Կլատսդոն ծովային պտոյտ մը պիտի ընէ, ևն։

* * *

Բայց արդէն Եւրոպայոյ ճակատագրոյն զբաղող աչխարհավարաց մեծ մասն այս միջոցիս ճամբորդելու վրայ են։ Պ. Կիրս, իշխան Պիզմարք, կոմս Քալնոքի և մինչև իսկ Իտալիոյ նախարարապետ Պ. Տէպրէդիս զանազանութեան կամ առանձնութեան համար պրոստատներ կ'ընեն, կամ մտադիր են ընել։ Ուրիշ ճամբորդ մ'ևս, որուն հետ թագուհի աւելի անմիջապէս գործ պիտի ունենայ, Սբ Տրըմմնտ Ուօրի է, որ մի քանի օրեր ևս յետաձգած է իր մեկնումն Լոնտոնէ, թերեւս այն պատճառաւ որ, ինչպէս կը գուշակուէր Պ. Պուրքի երկդիմի բացատրութենէն, եգիպտական խնդրէն զատ նաև Պէրլինի Դաշնագրոյն չգործադրուած յօդուածոց նկատմամբ պաշտօն մը պիտի ընդունի Լոնտոնի դաչնէն։ — Բոլոր այս ուղեւորութեանց մէջ, "Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին ճամբորդութիւնն առաւելապէս ուշադրութիւն կը գրաւէ։ Պաշտօնապէս, Զարին նախարարն արձակուրդ ստացած է Պ.Հեմիոյ (Աստրիա) ջուրերն երթալու։ Իրօք Պերլին և անտի Վարշաւ կ'երթայ, ուր պիտի հանդիպի Պիզմարք իշխանին, և այս հանդիպումն դիպուածական չպիտի լինի անշուշտ։ Պ. Կիրս ապա պիտի երթայ Կարլսբադ, Կայսերաց առաջիկայ տեսակցութեան առթիւ։ Ռուսիա, երկիւղ ունենալով թէ Լորտ Սալիսպըրի խաղ մը կը պատրաստէ իրեն, և թէ յանկարծ պատերազմի յայտարարութիւն կընայ լինել Մեծին Բրիտանիոյ կողմէ, կ'ուզէ նախապէս համաձայնիլ Աւստրիոյ հետ, որպէս զի, մինչ ինք կեդր. Ասիոյ մէջ զբաղեալ է, Վիէննայի կառավարութիւնն իրաց վիճակը չփոփոխէ Պալքանեան Թերակղզւոյն մէջ։

ՖՐԱՆՍԱ. Պ. Ժիւլ Ֆէրրի և Պ. Ռիէմանսօ իրարու բաւական «տուին առին» ելդիչն աշխարհաբարեան խնդրոյն առթիւ, որ վերջին յուզուեցաւ Մատակասքարի ֆրանսական արշաւանաց շարունակման համար խնդրուած վարկին քննէարկման պահուն։ Պ. Ժ. Ֆէրրի արդարացուց իր հետեւած աշխարհավարութիւն, ցոյց տալով թէ երբ ամենամեծ ազգեր ծաւալիլ կը սկսէին, Ֆրանսա չէր կրնար անտարբեր մնալ, և թէ իր պարտք և իրաւունք էր ծաւալում մը փնտռել հեռաւոր երկրաց մէջ։ Պ. Ռիէմանսօ Պ. Ժ. Ֆէրրի սոյն քաղաքականութեան Ֆրանսայի պատճառած կորուստներն յիշեցուց, և ջատագովեց՝ ներքին ամփոփման և ժողովրդային բարենորոգմանց գործադրման դատ։ Ո՛չ մին, սակայն, կը խօսէր ներկայ Խորհրդարանին. զի տարակոյս չի կար թէ նախարարական վարկը պիտի քննէարկուէր, և թէ ժողովոյն հանրապետական մեծամասնութիւնը Պ. Ֆէրրիի կողմը պիտի հակէր գաղթականաշխարհավարութեան խնդրոյն վրայ։ Երկուքն ևս անուղղակէս կը խօսէին «երկրին», այսինքն ընտրողներուն, որք ի մօտոյ պիտի կոչուին վճիռ արտասանել բացատրուած երկու տարբեր աշխարհավարութեանց վրայ։

ՌՈՒՍԻԱ. Ի Խարքովի երկու անծանօթ անձինք փորձեցին դերեզմանէն հանելով փախցուցնել Սչչասկան Լիխանսքիի մարմինն, որ ինչպէս կը յիշուի՝ վերջերս ի կախաղան հանուած էր ոստիկանութեան սպայ մ'ըսպանելուն համար։ Դերեզմանը մերժէր բանի պատին, և պահակը տեսաւ զիւերայն որ յիշեալ երկու մարդիկ դերեզմանին շուրջ կը դեղերէին, և բան մ'ընել կը պատրաստուէին։ Երբ հրամայեց որ հեռանան, մարդոց մին բեմվիզը մը պարպեց, և երկուքն ի միասին անհետացան։

— Հողագործական ոճիրք այժմ անպակաս են Ռուսիոյ մէջ։ Էլիզաւետգրադի մօտակայ երկու գիւղերու բնակիչք կտոր մը հողի համար երկար տարիներ ի վեր վէճ ունէին, որ այս օրերս յանկեցաւ յայտնի կռուոյ մը։ Երկու գիւղի մարդիկը զէնքերով իրարու վրայ յարձակեցան, երկու անձինք սպանուեցան և երկուք ալ վիրաւորեցան ծանրապէս։ Այսօրինակ դէպքեր դրեթէ ամեն օր կը պատմէ Իշխան Մէսչերսքիի Բաշտոյ թերթն, — որ կ'ըսուի թէ Զարէն կարգացուելու պատիւը կը վայելէ, — յատուկ սիւնակի մը մէջ, որոյ խորագիրն է «Անշնչանութիւնը կը յառաջդիմէ։» Այս խորագիր պատասխան մ'է Պ. Կատկովի նշանաբանին, «Կառավարութիւնն ընդ յառաջ», որոյ ներքեւ միշտ կը գրէ թէ, անիշխանական դէպքեր ամ ըստ ամէնոնաղելու վրայ են ի Ռուսիա, շնորհիւ կառավարական հսկողութեան եւս քան զեւս խստանալուն, որուն հարկը Պ. Կատկով անդադար կը ջատագովէր ներկայ Կայսեր գահակալութենէն ի վեր։ Բայց իրողութիւնք չեն համապատասխաներ Պ. Կատկովի բաղձանաց։ Ռուս գիւղացիք վստահութիւն չեն ցուցներ կեդր. իշխանութեանց և նոր դատարանաց վրայ, և տակաւին կը նախընտրեն իրենց վէճերն իրենց ձեռօք լուծել։ Դեռ անցեալ օր 298 գիւղացիք միամեայ բանտարկութեան դատապարտեցան, որովհետեւ իրենց ձեռօք արդարութիւն ի գործ դնել յանդգնելով, քանդած էին ջաղացք մը, որոյ տէրը գրաւած էր իրենց արօտավայրը։ Դիւղացիք ինքնապաշտպանութեան համար ըսին թէ ինչ որ բրած էին որոշուած էր գիւղային խորհրդոյն մէջ միաձայնութեամբ, և տուուեալ օրէնքներ։ Հապա տարբերաչարժ էր տեսնել վարչային մարմին մը, որ իր ամբողջութեամբ օրինաց հակառակ որոշում մը կուտար։

ԱԼՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ. Բրակալի Աւեւտարական Սենեկին, որ անդամոց մեծամասնութիւնն այժմ Ձեխ (պաւ) է, ինչ ինչ կարեւոր դիմումներ կը պահանջէ Աւստրօ-Հունգարական Դրամատան Պոհեմիոյ ճիւղին համար։ Ի մէջ այլոց, կը խնդրէ որ Գերմանական դրամատումը (պանքնոդ) ինչպէս գերմաներէն և մաճառերէն, նաև ձեխերէն արձանագրութիւն մը կրեն։ Ընդէ՞ուրեմն խրուագերէն և բոլոներէն ալ չգրուի։ Երբեմն աւստրիական դրամատումք անոնց բաղաձեղուեան էին որ վաճառականօրէն իրրև անգործածելի դադարեցան ի շրջաբերութենէ։ Ձեխերուն ազգասիրական հպարտութիւնը գոհ ընելու համար անոնց աղգային զինանշանը դրամատումներուն վրայ փորագրել կ'առաջարկուի։ Բայց այս եւս յառաջագոյն փորձուած է, և Աւստրիոյ հպատակ ամեն ազգեր կռիւ հանած են որոշելու համար թէ իւրաքանչիւրին զինանշանն ինչպիսի գիրք պարտէր գրաւել, այնպէս որ հիմա Աւստրիոյ դրամատումք բնաւ զինանշան չեն կրեր, այլ միայն Կայսեր շքադրանն, առեղծուածային պատկերներով։ — Բայց սոյն դրամատումի կռիւն իսկ հետաքրքրաշարժ է, իրրև մին ի բաղմաթիւ օրինակաց ազգութեանց կռուոյն որ անդադար կը մղուի Աւստրիոյ մէջ, թէեւ խաղաղապէս։

ԻՏԱԼԻԱ. Բաղում Իտալացիք կը հաւատան թէ Մայր Աստուածածին պարբերաբար կ'երեւի Իտալիան դեղեցիկ երկրին զանազան կէտերուն վրայ։ Այս օրերս ծանուցուելով թէ Աստուածածինը պիտի երեւի ի Ֆրանս, տեղւոյն քաղաքապետը Բիաչենձայի կառավարչէն զօրք խնդրեց, և

— 114 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ
ԺԻՒՎ ՎԷՊ

ԿՐԱՆԹ ՆԱԻԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՁՈՐՍ ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ԱՒՈՒՐՔ

—Առ Աստուած, Մ'լորտ, ըսաւ Միւլրատի հանդարտ ձայնիւ, և չատ չանցած՝ աներեւոյթ եղաւ անտառին եզրէն անցնող արահետէն։

Նոյն միջոցին հովին բռնութիւնն աւելի կը սաստկանար։ Եւկալիպտոսաց բարձր ստերը կը ճարճատէին մութին մէջ։ Զորացած ստերուն ջրաթափերմ դեւտին վրայ անկումը կընար լսուիլ։ Մէկէն աւելի հսկայ ծառեր, որոց հիմքը ցամքած էր, բայց մինչեւ ցայսմամ կանգուն կեցած էին, յերկին տապալեցան այս բուռն մրրկին ժամանակ։ Հողմն կ'ուռնար անտառին ծառոց ճարճատման մէջէն, և իր չարագոյժ հեծութիւնը Մոնուի մռնչման հետ կը խառնէր։ Դեպ յարեւելք բռնուած թանձր ամպեր, ջրդիպ կապերտներու պէս, գետնին կը ծռուէին։ Տխուր աղջամուղջ մը կ'աւելցնէր գիշերին սոսկումը։

Ուղեւորք, Միւլրատի չուելէն յետոյ, սայլին մէջ կծկեցան։ Տիկին Ելէնա և Մարի Կրանթ, Կլէնարվան և Բականէլ, առաջին խորշին մէջ էին, որ ամբապէս փակուած էր։ Երկրորդին մէջ ալ Օլդինէթ, Ուիլսըն և Ռոպէրթ բաւական տեղ գտած էին նստելու։ Իսկ հաղարապետն և Ճոն Մանկիս դուրսը կը հսկէին։ Կարեւոր խնդիրներ դարձ, վասն զի Քոնվիքաց կողմէ յարձակում մը գիւրին և հեռեւաբար հնարին էր։

Երկու հաւատարիմ պահնորդք խղճի մտոք կը կատարէին իրենց հսկողութիւնն, և փիլիսոփայական համբերատարութեամբ կ'ընդունէին այն խստաշունչ քամիները, զորս գիշերը կ'արձակէր իրենց երեսին։ Կը ջանային թափանցել իրենց աչքը այն խոր խաւարն, որ յոյժ նոպատուոր էր դարանակալութեանց, վասն զի ականջնին չէր կրնար բան մ'զգալ փոթորկին ժխորին մէջ, այն էր հովին մռնչիւնը, ծառոց ոստերուն շառաչիւնը, ծառոց բուներուն դղրդմամբ անկումն և չղթայազերծ ջրոց մռնչիւնք։

Սակայն մերթ ընդ մերթ կարճատեւ հանդարտութիւն մը կը դադրեցնէր մրրկին բռնութիւնը։ Քամին կը լռէր կարծես չուչչ առնելու համար։ Անուշ միայն կը հեծէր անչարժ եղեւներուն և խիժենաց ու վարագուրին մէջէն։ Լռութիւնն առաւել խորին կը թուէր այդ վայրկենական հանդարտութեանց մէջ։ Ցայսմամ հաղարապետն և Ճոն Մանկիս ականջ կը դնէին ուշադրութեամբ։

Այս հանդարտ միջոցներէն միոյն մէջ սուր չչիւն մը հասաւ իրենց ականջին։

Ճոն Մանկիս վազեց հաղարապետին քով դնաց։

—Լսեցի՞ք, ըսաւ նմա։

—Այո՛, ըսաւ Մաք Նասպ, մ'արդ է թէ կենդանի։

—Մա՛րդ է, պատասխանեց Ճոն Մանկիս։

Յետոյ երկուքեան մէկէն ականջ դրին։ Անբացատրելի չչիւնը վերստին լսուեցաւ յանկարծ, և բոմբիւնի նման բան մը պատասխանեց նմա, բայց դրեթէ անըմբռնելի կերպիւ, վասն զի փոթորկին այն միջոցին նոր ուժգնութեամբ կը մռնչէր։ Մաք Նասպ և Ճոն Մանկիս չէին կրնար իրարու խօսք լսել։ Գնացին սայլին քով կեցան։

Նոյն միջոցին սայլին կողէն վարագոյրը բացուեցաւ, և Կլէնարվան իր երկու ընկերաց քով իջաւ։ Նա ալ անոնց պէս լսեր էր այն չարագոյժ չչիւնն և բոմբիւնն որ արձագանգ տուեր էր վաղին տակ։

—Ո՞ր կողմէն է, հարցուց։

—Սա մութ չաւդին կողմէն, ըսաւ Ճոն Մանկիս, Միւլրատի բռնած ուղղութիւնը ցուցնելով։

—Ո՞ւրտեղ հեռաւորութենէ։

—Հովը կը բերէ, պատասխանեց Ճոն Մանկիս. առ նուազն երեք մղոն պարտի լինիլ։

—Օ՛ն, ըսաւ Կլէնարվան հրացանն ուսը դարնելով։

—Ո՛չ, չերթանք, պատասխանեց հաղարապետ։ Մեզ սայլէն հեռացնելու համար մոտծուած դաւ մ'է։

—Եւ եթէ Միւլրատի այդ թշուառականներէն յարձակում կրելով սպանուի՞, ըսաւ Կլէնարվան Մաք Նասպի ձեռքը բռնելով։

—Վաղը կ'իմանանք, պատասխանեց հաղարապետը պաղ կերպիւ, հաստատապէս որոշած լինելով թէ չպէտք Կլէնարվանի որ անօգուտ անխոհեմութիւնն մ'ընէ։

—Դուք չէք կրնար իշխանէն մեկնիլ, Մ'լորտ, ըսաւ Ճոն. ես միայնակ կ'երթամ։

—Դուք ալ չէք կրնար, ըսաւ Մաք Նասպ։ Կուզէ՞ք որ մեզ մի առ մի սպաննեն, մեր զօրութիւնը նուազեցնելով և մեզ այդ չարագործաց ձեռքը մատնելով։ Եթէ Միւլրատի զոհ դնաց ադոնց, դժբաղդութիւն մ'է զոր պէտք չէ կրկնապատկել երկրորդով մը։ Միւլրատի վիճակաւ ընտրուելով դնաց։ Եթէ վիճակը ինձ ընտրէր, ես պիտի երթայի անոր տեղ, առանց որ ես է օգնութիւն խնդրելու կամ սպասելու։

Հաղարապետն ամեն մասամբ իրաւունք ունէր։ Միւլրատի հետեւէն երթալու փորձ փորձել, մութ գիշերին մէջ Քոնվիքներուն առջեւ դիմել, որք անշուշտ դարանամուտ եղած էին թաւտներու մէջ, անխոհեմութիւն էր, մանաւանդ անօգուտ։ Կլէնարվան խուսքը չաս մարդ չուներ որ կարենար զսկել մի քանին։

Սակայն Կլէնարվան չէր ուզեր համաձայնիլ այս խորհրդածութեամբք։ Ձեռքն հրացանին կը զարնէր։ սայլին շուրջը կ'երթեւեկէր. ամենափոքր ձայնի ականջ կը դնէր։ Իշաւանը պատող ալեւադոյժ խաւարը թափանցել կը ջանար իր աչօք։ Երբ կը խորհէր որ իր մարդոցմէ մին ի մահ զարնուած և երեսի վրայ մնացած էր, ի զուր յօդնութիւն կոչելով զանոնք, որոց համար իր անձը դրած էր, այս մոտծութիւն կը խոշանդէր զինքը։ Մաք Նասպ չէր գիտեր թէ պիտի կրնար արդեւլ, եթէ Կլէնարվան, յարշտակելով իր սրբազէն, երթար ինք զինք Պէն Ճոյսի հարուածոց ենթարկէր։

—Դուքա՛ր դ, ըսաւ նմա, հանդարտեցէք, մտիկ ըրէք բարեկամի մը խօսքը։ Մոտածեցէք զՏիկին Ելէնա, զՄարի Կրանթ և միւս մնացեալները։ Մանաւանդ խորհեցէք թէ ոնր պիտի երթաք, ոնր պիտի գանէք ըստ Միւլրատի։ Ատոի երկու մղոն հեռի յարձակում կրած է. որ ճանրու վրայ, որ ապահեռի մէջ...

Նոյն վայրկենին, և իրրեւ պատասխան հաղարապետին, ատգնապի ձայն մը լսուեցաւ։

—Մարիկ ըրէք, ըսաւ Կլէնարվան։

Հրազէնի պայթիւնը լսուած կողմէն կուգար, քառորդ մղոնի չափ հեռիէն։ Կլէնարվան, եռ մղելով զՄաք Նասպ, արագ հեռին կողմն երթալ սկսաւ։ Նոյն միջոցին սայլէն երեք հարիւր քայլ հեռի սա բաւերը լսուեցան.

—Առ ի՛ս, առ ի՛ս։

Ցաւագին և յուսահատական գոչիւն մ'էր։ Ճոն Մանկիս և հաղարապետն այն կողմը վազեցին։

Քանի մը վայրկեան յետոյ թաւուտին քով մարդկային ձեւ մը նշմարեցին, որ ընդքարշ կուգար ողբալի հեծութիւններ արձակելով։

Միւլրատի էր, վիրաւորեալ, մահամերձ. երբոր իր ընկերները բռնեցին վերցուցին զայն, ձեռուընին մրջեցաւ արեամբ։

Անձրեւը նորէն կ'սաստանար, և հողմն ուժգնութեամբ կը փչէր ծառոց ոստերուն մէջէն։ Այն բռնաշունչ մրրկին մէջ էր որ Կլէնարվան, հաղարապետն և Ճոն Մանկիս Միւլրատի մարմինը փոխադրեցին։

Երբոր սայլն քով հասան, ամեն ոք տաքի վրայ եւաւ։ Բականէլ, Ռոպէրթ, Ուիլսըն և Օլդինէթ սայլէն իջան, և տիկին Ելէնա իր խորշ դժբաղդ Միւլրատին թողուց։ Հաղարապետն հանեց նաւատիին թիկնոցին, որ արեամբ և ջրով թաթաւեալ էր։ Դաշտին հարուած մը կրած էր խեղճն իր աջ կողին։

Մաք Նասպ ճարտարութեամբ պատեց վէրքը։ Սուրը մնասած էր կարեւոր գործարաններուն, յայտնի էր։ Միրանեղէնն արիւն մը կը հոսէր վէրքէն։ Հաղարապետը զայն ցուրտ ջրով լուալէ զլխի, արեթէ խրցան մը դրաւ ծակին բերանը, յետոյ ծուռտէ քաթաներ դրաւ վրան և երիզներով պատեց։ Այսպէս յաջողեցաւ դադրեցնել արեան հոսումը։ Միւլրատի ձախ կուրծքին վրայ դրուեցաւ, գլուխն ու կուրծքը բարձր, և տիկին Ելէնա քանի մ'ուսով ջուր խրմցուց նմա։

Ցառաջդ ժամ յետոյ, վիրաւորն, որ ցայնժամ անշարժ էր, խրատեցաւ. աչքերը կէս մը բացուեցան և շրթունքը քանի մը կցկտուր բառեր մրմնջեցին։ Հաղարապետն ականջը մօտեցնելով, լսեց որ սա բառերը կը յեղյեղէր.

«Միւլրատ . . . նամակը . . . Պէն Ճոյս . . . : »

(Շարունակելի.)

անմիջապէս մաս մը զօրք դնաց Քարանո։ Մեծ բարութիւն համախմբուած էր «Հրաշագործ» տեսնելու։ Քաղաքապետն յառաջանալով դէպի գիւղային սրբավայրն ուր կը սպասուէր որ պիտի իջնէր Աստուածամայրը, վերցուց հոն գտնուող նշխարաց անօթը, որոյ վրայ կախուած էին թաշկինակներ, ժապաւէններ և զանազան նուէրներ, և ամենքն ալ պահ մը ի տես հասարակութեան դնելէ յետոյ, յանձնեց քահանային, որպէս զի եկեղեցին փոխադրէ։ Քաղաքապետն ապա հեռացաւ, զօրաց պաշտպանութեան յանձնելով սրբավայրն ու եկեղեցին։ Բայց երկու ժամ չանցած զօրքեր եկան զինք ետ կոչելու, վասն զի երկու աղջիկներ կը յայտարարէին թէ տեսած էին զՄայր Աստուածածին և այն պատճառաւ երեսի վրայ ինկած կը մնային։ Քաղաքապետը բռնեց վերցուց մին։ Աղջիկն ինքն իրմէ ելած, նուազել կը ձեւացնէր։ Ոչ ոք բռնեց զինք, ուստի նորէն գետին ինկաւ, այնքան սաստկութեամբ որ կրած ցնցումէն խելքը գլուխն եկաւ։ Բայց անմիջապէս ելաւ փախաւ։ Մինչ այս մինչ այն, գիւղը վրայ եկաւ, և բազմութիւնը ցրուեցաւ յուսաբեկ և զբաղմունքնի գերեցաւ։ Ոչ ոք բռնեց զինք, ուստի նորէն գետին ինկաւ, այնքան սաստկութեամբ որ կրած ցնցումէն խելքը գլուխն եկաւ։ Բայց անմիջապէս ելաւ փախաւ։ Մինչ այս մինչ այն, գիւղը վրայ եկաւ, և բազմութիւնը ցրուեցաւ յուսաբեկ և զբաղմունքնի գերեցաւ։ Մնայուն պահակ մը դրուեցաւ ի Քարանո։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ մայրաքաղաքիս ռուսական Դեսպանատունն ո՛ր ի է նոր տեղեկութիւն չունի Կաթողիկոսական խնդրոյն վիճակին վրայ։

Քաղաքական ծողովը գումարեցաւ երեկ ի Պարիսիարքարան ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարքի Հօր և Ատենապետութեամբ Վսեմ. Նուրեան էֆէնտիի, և հետեւեալ տնօրինութիւնները ըրաւ։

Ա. Նալբանդեան արիածեալ ազգայնոց խնդիրը նեկտոզութեան առնելով, տեսաւ որ թէեւ արդէն օգնութեան միջոցներ ձեռք առնուած էին, բայց նորագոյն տեղեկութեանց առջեւ, որք հասած են ի Պարիսիարքարան, աւելի կարեւոր միջոցներ տնօրինեց։

Բ. Ընծայարանի հաստատութեան համար Կրօնական ծողովոյ Ցայտագրին վրայ խորհրդակցելէ յետոյ, սկզբան ընդունեց այդպիսի հաստատութեան մը կարեւորութիւնը։ Բայց նկատելով որ փափաքելի էր որ Ազգն ոչ միայն քահանայից բարոյական և ուսումնական վիճակին զարգացման աշխատի, այլ օգնութեան ձեռք կարկաւէ, նաեւ ծեր և անկարող քահանայից, որոնց խնայողական սնտուկ մը հաստատել այդպիսեաց օգնելու համար և առ այդ հասոյթի աղբիւրներ սահմանեց։

Սոյն խնդրոյն իւր վերջնական որոշումն ստանալու համար յառաջիկայն նըստին Խաան ծողովոյ պիտի ներկայանայ։

Գ. Ղալաթիոյ Կեդր. Վարժարանի Հոգաբարձութեան Դիւանը ներկայանալով, ծողովը բանակցութեան սիրաս յիշեալ մարմնոյն հետ վարժարանը սեպտ. 1 ին բանալու համար։

Դ. Տիվրիկի դադարեալ Հոգաբարձութեան անդամները մինչեւ ցարդ վարչական որոշմանց անսասանելուն համար, որոշուեցաւ հրաւիրել զանոնք յառաջիկայ նստին, և եթէ չարունակեն իրենց ընթացքն, զարժանն տնօրինել։

Ե. Ազգային որոց նոր կանոնագիրն, որ Մայր Դիւանի կողմէ Քաղ. ծողովոյ հաղորդուած էր, նկատողութեան առնուելով, ծողովը այդ որոց բաժնի վրայ հաւաքման մէջ զանազան դժուարութիւններ տեսաւ և որոշեց կրկին դիմել Ազգ. ծողովոյն առաջարկելու համար որ Եշմական Դիւանի առաջարկներն անփոփոխ պահուին։

Վիէննայէն կը ծանուցանեն մեզ թէ Պարսկական Դեսպանատան առաջին քարտուղար Մեծ. Արթաքի Խան Նեվրուզ, որոյ պաշտօն է Պողոս պէյ Տատեան, նշանուեր է Ռումանիոյ Ռօմա քաղաքին մէջ եղիսաբէթ Փրօնկու անուն բարեկիրթ և ուսեալ Հայ Օրիորդի մը հետ։ Փրօնկու ընտանիքը Ռոմա քաղաքին առաջնակարգ ընտանեաց մին կը համարուի և Աստուածեան սոնուականութիւն ունի։

Դողեստի արժանի կէտ մ'է որ սոյն ընտանիքն ազգասիրութեան ոգւով ներշնչեալ ցանկացեր է միշտ իր սերունդներն հայ լեզուի հետ կապել, մերժելով զատարագդիս։

Օրիորդին պաղբ մեծակառոյց դղեակ մը հիմներ է նոյն քաղաքին մէջ 130,000 ֆ. ծախսելով։

Բաղէշի Մոճկոնիկ գիւղին մէջ վարժարան չգտնուելուն, Արժ. Տ. Մեսրոպ վարդապետ Մոկացեան կաշխատի վարժարանի մը հաստատութեան։ Ա. յս նպատակաւ Ազգ. Պատրիարքարանէն ժապաւենեալ ռումբ յանձնուած է նոյն գիւղի ազգայիներէն Եղիշէ աղա Աւետիսեանի որ հանգանակութեան ձեռնարկած է մայրաքաղաքիս մէջ և քանի մ'օրուան մէջ յաջողած է 1500 դրուշի մօտ գումար մը հանգանակել։

Մարսիլիոյ մէջ Փորթուգալեան Մեկբրտիչ էֆի խնամքութեամբ հրատարակուիլ սկսած Աւդինա ազգ. թերթի առաջին թիւն ստացանք։

Կը յիշեցնենք թէ վաղը տեղի պիտի ունենայ Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան վարժարանի ստանուհեաց տարեկան միջանակարգաշրջութեան հանդէսն Օրթագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ։ Հաւատի ենք թէ կրթասէր ազգայինք պիտի փութան ներկայ գտնուիլ այն հանդիսին և քաջալերել Դպրոցասէր Տիկնանց ազնիւ ջանքերն։

Վաղը պիտի կատարուի նաեւ Ընկերութեան ձեռամբ անցեալ տարի կազմակերպեալ վիճակահանութիւնն։

ԱԶԳ

Կը ծանուցուի այն անձանց, որք Աշխարհի Թագէոս Կէօղիւրեան պատուելւոյ գրոց վիճակահանութեան տոմսերն առած են, թէ՝ յիշեալ վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ կիրակի Յուլիս 28 իժամ 7 յիսկիւսար ձեռնարան Վարժարանին մէջ։

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹՕՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յուլիս 27

ԿՐԹԱԿԱՆ. Պէտ է Վերջապէս Ընթերաստ. Ս. ՅՈՎՀԱՆՆԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ. Փոխանցուած յեր մանուս.—Ա. ռուպլեպանական մինչեւ կեդրոնական դիր. ՏՕՔԹ. Ռ. ՌՕՊԷՆՍՕՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ. Ռուսաստ և Անգլիայի է Կեդրոնական Ասիա

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Շէնական ոգեանց Դանոյեաց (Լանգոնթէն). Հան է հայ.

Ց. ԳՈՒՐԳԷՆ

ԳՐԱԿԱՆ. Մուսէն Իշխանուհիները.—Ռոմանոյ Բարտուղի (ՅԻԿԱՐՕ)

ՎԷՊ. Կոստանդինի վրայ ամանանութիւն. (ԱԼԷՔՍԱՆԴՐ ՏԻՄՈՆ)

ՈՐՈՇԱՑԱՆ ՀԱՅԱՍ ԱՐՔԵՐԷՆ ԱՄԱՆ ՄԷՋ. ՀԱՍԿԱՔԱՂ

ՔԱՂՐԱՍԷՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Սարպէն, Նեբէն, Աղէքսէն.

ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ (ԿԶԱՎԻԷ ՏԷ ՄՈՆԹԷՐԷՆ) Թարգմ. Մ. ՀՕՊԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արեւելեան Ռումէլիի կուսակալ Կավրիէլ փաշա Նախընթաց օրը Ֆէնէր երթալով այցելութիւն տուաւ Յունաց Ամեն. Պատրիարքին։

Վեհ. Սուլթանը բարեհաճած է իւր բարձր հովանաւորութիւնը շնորհել այս տարուան Նաւարշաւին որ պիտի կատարուի օգոստոս 15/27 ին ի Մեծ Կղզի։

Մայրաքաղաքիս երեւելի սեղանաւորներէն, վաճառականներէն և պետական պաշտօնատարներէ Կարգադիր Յանձնախումբ մը կազմուած է, ընդ նախագահութեամբ ծովային Նախարար Վսեմ. Հասան փաշայի։

Կարգադիր Յանձնախումբն այսօր ի Նիոտ կը գումարի Օսմ. Նայս. Պանքայի մէջ, հանդիսին վերջնական կարգադրութեանց վրայ խորհրդակցելու համար։

Ժամանակին պիտի փութանք հրատարակել Նաւարշաւի ծրագիրն։

Գարատաղի իշխանուհին մօտերս Կ. Պոլիս և Սոֆիա պիտի այցելէ։

Արտաքին գործոց Նախարարութիւնն 1600 ոսկւոյ վարկ մը սահմանած է Զէթինեի մէջ օսմանեան դեսպանատան շէնքի մը կառուցման համար։

Էյուբէյ կը ծանուցանէ թէ Լոնդրայէն առնուած նորագոյն հեռագրաց նայելով, Սբ Հէլենի Տրամբնտ Ուորֆ՝ ինչ ինչ պարագայից բերմամբ՝ հինգ վեց օր յետաձգեր է իւր մեկնումն։ Հետեւաբար անգլիական պատուիրակն հազիւ յառաջիկայ չաբթու վերջը մայրաքաղաքս կ'սպասուի։

Կը հաւատան թէ Բ. Դուռը մտադիր է դեսպանական ճանապարհ ձեռնարկներ ընել Պէրլինի դաշնագիրն ըստորագրող տէրութեանց քով, որպէս զի բարեփոխուի Արեւելեան Ռումէլիի կաղմական կանոնագրի այն մասն որ կը վերաբերի այդ գաւառի կողմէն կայսերական կառավարութեան վճարելի տարեկան հարկին։

Նեղոյցս կիմանայ թէ պարսիկ դրամատարց ընկերութիւն մը, որ քանի մը տարի առաջ Բ. Դռնէն արտօնութիւն խնդրած էր Պաղտատէն մինչեւ Բէրպէյա երկաթուղի մը շինելու, մտադիր է գործադրել դիմում ընել սոյն արտօնութիւնը ձեռք բերելու համար։

Վերջերս տաճկական ընդհանուր դատախազ Լոթիֆ պէյ բաւական ծանր կերպով հիւանդ լինելով, ժամանակ մը բացակայ պիտի գտնուի իւր պաշտօնատեղիէն։

Տէր-Գոսեան ջրի Ընկերութիւնն արտասովոր փութաջանութեամբ ի գլուխ հանեց Պէշիկթաշի և Օրթագիւղի մէջ ջրի խողովակաց վերանորոգութիւն գործն։ Կը յիշուի թէ Վեհ. Սուլթանն հաճած էր հրամայել որ Եըլոզղի պարտիզին մէջէն անցնին այդ իրաւունքներ։ Աշխատութիւնք յառաջ տարուեցան ընդ հսկողութեամբ Պէշիկթաշի հրամանատարութեան։

Հասան փաշայի որ ինքն ընտրած է բոլոր գործաւորներն, իսկ արուեստական աշխատութեանց հսկեցին ընկերութեան երկրաչափներն և պ՝ալատան ճարտարապետ մը։

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ առաջին սենեկապետ Օսմանն պէյի միջոցաւ իւր գոհունակութիւնն արտայայտել Ընկերութեան, միանգամայն հրամայեց Արքունի Գանձուն վարչութեան որ տարեկան 1000 ֆրանք յատկացնէ Եըլոզղի պարտէզը ջուր առնելու համար, միանգամայն 3000 ֆրանք՝ պալատան արտաքին պիտույից համար։

Կը կարծուի թէ ընկերութիւնն ունի այժմ մինչեւ 1460 բաժանորդ։

Պարսկական դեսպան Միրզա Մահմուտն խան որ Մարիէնպատի Ջերմանկերը կը գտնուէր, Պերլին ուղեւորեր է, ուր Շահին կողմէ իրեն յանձնուած յատուկ պաշտօնը կատարելէ յետոյ, ուղղակի Կ. Պոլիս պիտի գայ։

Կըսուի թէ բարձրագոյն հրամանաւ խիստ քննութիւն մը պիտի բացուի օսմանեան թղթատարութեան վարչական կազմակերպութեան վրայ, ստուգելու համար թէ ինչ պատճառաւ անպատիժ կը մնան այլեւայլ նամակատարց մէջ վերջերս կատարուած գողութեանց հեղինակներն։

Ընդհանրապէս կը կարծուի թէ այս քննութիւններէն յետոյ, յիշեալ վարչութեան մէջ պաշտօնէից կարեւոր փոփոխութիւնք պիտի լինին։

Նախընթաց թուականն մանրամասն ծանօթութիւններ հրատարակեցինք Արեւելեան Ռումէլիի գատական գործոց տեսուչ Պ. Պոչէֆի կողմէ գաւառին դատական իշխանութեանց ուղղեալ շրջաբերականին վրայ, որ՝ ըստ հրահանգի Բ. Դրան՝ կը պատուիրէր որ քաղաքային դատարանաց կողմէ օտար հպատակի մը դէմ և ինքնատ ընկի անձի մը տրուած դատավճռոց գործադրութիւնն այսուհետեւ յանձնուի տեղական կառավարութեան և թէ հիւպատոսք միջամտելու իրաւունք չունենան։

Էյուբէյ կիմանայ թէ մեծ տերութիւնք չեն ուզեր ճանչնալ Արեւելեան Ռումէլիի սոյն իրաւասութիւնն և հետեւաբար հրահանգ ղրկած են իրենց հիւպատոսաց որ ի Փիլիպէ, որպէս զի բողոքեն այս տնօրինութեան դէմ և չընդունին անոր գործադրութիւնն իրենց հպատակաց նկատմամբ։

Կը յիշուի թէ Բաղքաքաղաքութիւնն 8000 ոսկւոյ վարկ մը խնդրած էր Բ. Դրնէն, վասնզի քաղաքանց չինութեան ձեռնարկելու համար։

Կըսուի թէ ծովափունք ոչ միայն քարերով պիտի յարդարուին, այլ և երկաթեայ վանդակներով պիտի շրջապատուին։

Խնդիրն այժմ Ներքին գործոց Նախարարութեան և Բաղքաքաղաքութեան միջեւ բանակցութեան նիւթ եղած լինելով քննութեան պիտի ձեռնարկուի ի մօտոյ։

Նախընթաց օրը, Բէժիկ Նորընտիր տնօրէն Պ. Ֆրանք Օպուանօ երբ իւր հրաժեշտը մատոյց Հանրային Պարտուց Վարչութեան, գլխաւոր պաշտօնեայք խմբովին ներկայանալով իրենց յարգանքը մատուցին հրաժարեալ տնօրէնին, և Պ. Բանբալի՝ ի փիլոյ գիւանապետաց՝ Պ. Օպուանօի ընծայեց ոսկի կաղամար մը՝ ընտիր քարերով զարդարուած, որ արտաքսական նորբր ձեռակերտ մ'էր։ Պ. Բանբալի այս առթիւ յայտնեց իւր և իւր բոլոր պաշտօնակցաց ցաւն իրենց սիրեցեալ տնօրէնին հեռանալուն համար։ Պ. Օպուանօ չնորհակալ եղաւ այս համակրական ցոյցերէն և ամենուն իւր ողջոյնը տալով մեկնեցաւ։ բաւական յուզեալ։

Մուսալի մէջ եկեղեցւոյ մը խնդրոյ առթիւ, Հռոմէական և Յակոբիկեան Ասորւոց միջեւ սաստիկ կռիւ մը տեղի ունեցած և ոստիկանութեան միջամտութեամբ՝ խնդրոյ առարկայ եղող եկեղեցին Յակոբիկեանց յանձնուած լինելով, Հռոմէական Հայոց Պատրիարք Գերեզ. Ազարեան Սրբազան Բ. Դրան ուշադրութիւնն հրաւիրած է այս մասին։

Բէօթահիոյ նախորդ կառավարիչ Հասան Ֆիխմի փաշա որ Սէրէզի կառավարիչ անուանած էր, Բ. Դրնէն ստացած հեռագրական հրամանին վրայ իւր նոր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

Բէօթահիոյ Նորընտիր կառավարիչ Թէվֆիգ փաշա եւս կը պատրաստուի իւր պաշտօնատեղին ուղեւորիլ։

Մայրաքաղաքիս Նամակատունէն Իզմիր ղրկուած 150,000 դրուշի նամակագրաշարերու կորուստը ծանուցած ենք արդէն։

Ըստ նորագոյն տեղեկութեանց, այդ նամակագրաշարի ծրարն Իզմիր ղրկուելու համար Եէնի–Շամիի նամակատունէն յանձնուած է գաւառական թղթատարութեան պաշտօնէին, որ ըստ օրինի ստորագրած և կնքած է ընդունելութեան տուժարն։

Հետեւաբար գործոյն պատասխանատուութիւնն յիշեալ պաշտօնէին վրայ ծանրացած լինելով, խնդրոյն քննութիւնն յանձնուեր է Քաղաքապետութեան վարչական ժողովոյն։

Ադրիանդրիոյ Յունաց Պատրիարք Տ. Սոփրոնիոս օգտակարութեան համար Միկերկրականի Լերիոս կղզին գընացած է։

Հաճեան Անտոն էֆէնտիի Տիկնոջ մահուան ցաւալի արկածին մէջոցին, Տիկին Խ. Հաճեան և Օրիորդք Հաճեան ուզելով ամեն հնարաւոր միջոց ի գործ դնել ապատելու համար իրենց սիրեցեալ հարսն որ բոցերու դէմ կը մարտնչէր, բոցերը մարել չանցած պահուն ձեռքերնին այրած էին։

Կը լսենք այժմէն եղած այրուցքները բժշկելու վրայ են բարեբաղդաբար և թէ անանց հետքն իսկ չպիտի մնայ քիչ ատենէն։

Լէյտբէրս խօսելով Թուրքիոյ գաւառաց մէջ իմուրեցաց և այլ ճանրաներու չինութեան վրայ, կ'ըսէ թէ հասած պաշտօնական տեղեկագիրք որքան սաստիկ մեծ դժուարութիւն կը խօսին այդ կարգի աշխատութեանց յառաջիմութեան վրայ, միւս կողմէ ապատատես ուղեւորաց տեղեկութիւնք բոլորովին չեն համաձայնատարներ մեր կազմած դատարկին։ Ա.յսու հանդերձ, յառաջ բերուած վկայութիւններէն կ'երեւի թէ քիչ չատ կատարեալ կառուցիներ չինուելու վրայ են այս ու այն գաւառաց մէջ։ Սակայն, կը յարէ անկլօ–ֆրանսական թերթն, տիրայօժար այս ենթադրութիւնն ընելով հանդերձ, չենք կրնար ուրանալ թէ մայրաքաղաքիս և շրջակայից մէջ այս կարգի աշխատութիւնք բարձի թողի եղած են բոլորովին։ Տաս տարի է վեր տաս մեթր նոր ճանրայ չինուած չէ այս տեղ։ և որ աւելի գէշն է, բնաւ փոյթ չի տարուիր նորոգելու ի վաղուց չինուած ուղիներն որք ողորմելի վիճակ մ'ունին։ Պալթա–լիմանի ճանրան գրեթէ անանցանելի եղած է տեղ տեղ մանաւանդ ձմեռը։ Թարպիա տանող կառուցին այնքան խեղճ վիճակ մ'ունի որ Զինճիրլի Գուլուի և Մասլաքի մէջտեղ կառքերը կը հարկադրին շեղիլ անկից և դաշտերէն անցնիլ։ Պէօյիւքտէրէէն Պէրկրատ և Պահճէ–քէօյ տանող ճանրան ճահիճներու կոյտ մը դարձած է։

Ո՛ւմ է յանցանքն այս ամենուն մէջ, կը յարէ Էյուբէյ։ Գուցէ ո՛չ մեկուն, և Կ. Պոլսոյ բնակիչք պէտք է ըմբռնեն թէ այս է իրաց ճշմարտն վիճակն և թէ պէտք չէ բարեսրբում սպասելը ժամանակ անցնելով կը վարձիք անոր։ Ուղեւորաց օգնորները գիւրաւ կը բժշկուին կառաց ցնցումներէն և Պոլսեցիք կը սովորին վճարել շարունակ անիւներու և դասանակներու նորոգութեան ծախքեր։ Բայց այս բան դժուարին է օտարականաց համար որք կուգան այցելել քաղաքաց թագուհին, մանաւանդ անոնք որք ոտք կոխած են Բէյլիթի անման փողոցներու սալայատակաց վրայ։ Դիւրին է գուշակել թէ երբ մեկ տարին Օսմանեան մայրաքաղաքն երկաթուղեաւ միանայ եւրոպական դէմն, այցելուաց թիւը մեծապէս պիտի բազմապատկի։ Հաճոյական և օգտակար պիտի լինի այդ, բայց միանգամայն ապերախտութիւն և անհիւրասիրութիւն է անգութաբար ցնցել նորեկ ուղեւորները։

Մեր պաշտօնակիցն այս տողերը գրելէ յետոյ, յոյս կը յայտնէ որ թագաւորութիւնը լրջօրէն ձեռք պիտի առնու գործը և դարման պտի իրայ վիճակին՝ որ, եթէ չարունակուի, պիտի հարկադրէ ժողովուրդն օդապարիկի դիմել՝ իբր միակ միջոց փոխադրութեան, քիչ մը օդ առնելու համար։

Իզմիրէն կը հեռագրեն թէ Մէսսաժերիի թղթատարը չոգեանն որ Մարսիլիէն կուգար, Իլաղոմէնի մաքրանոցին մէջ քարանթինայի ենթարկուեր է։

Փիլիպէ Հէլլ լրագիրը կը պատմէ թէ Արեւելեան Ռումէլիի Բանաձ գաւառակի պուլղար գիւղի մը բնակիչք բոլոր իրենց ոչխարները, կովերը, ձիերն ու այլ կենդանիներն համախմբելով ոստիկանի մ'ընկերակցութեամբ մօտակայ խամ գիւղ մը առաքնորդեր են և արտօրէից մէջ թողեր են զանոնք։ Այս կերպով քանի մը ժամուան մէջ բոլոր հունձքերն սպառեր և մը չակեալ հողերն աւերեր են, հակառակ իսամ գիւղացւոց աղաղակներուն և բողոքանաց։ Այս վերջինք ստեմելով որ այլ ևս թշուառութեան և չքաւորութեան մատնուած են, խմբովին կեդրոնական կառավարութեան դիմեր են ի Փիլիպէ, օգնութիւն հայցելու համար։

Հէլլ կը կարծէ թէ պուլղարաց այս արարքներուն նպատակն է հարկադրել գիւղօրէից թուրք բնակիչներն որ այլուր գաղթեն։

Խասգիւղ Հաղբէր օղլու թաղին մէջ բընակող Ստեփան անուն ձկնորսի մը կինը Գայանէ, ուրբաթ գիշեր իւր անկողնոյն մէջ յանկարծամահ եղաւ։

Անցեալները Յոյն մը ոստիկանութեան դիմելով լուր տուած էր թէ իւր քրոջ աղջիկը՝ Ղալաթիոյ Մոմանէի կողմերը տան մը մէջ ցերեկ ատեն ինքզինքն սպաննած է։ Ա.յդ ոճիրն այժմ կը քննուի։ Կըսուի թէ լրատուն կասկածելի թուած լինելով ձերբակալուած է։

Բեգրսպուրկի լրագիր մը կը ծանուցանէ թէ Լակօրիս անուն ռուս նկարիչ մը Անատոլուի մէջ ուղեւորութիւն մ'ընելով, Պայազիտ հասած ատեն ուզեր է քաղաքին բերդերը գծագրել, պատրաստելու համար պատկեր մը որ պիտի ներկայացնէ Պայազիտի պաշարումն ի Ռուսաց։ Տեղական իշխանութիւնք թէեւ արտօներ են նկարիչն այցելել բերդերն, բայց թոյլ չեն տուեր գծագրել զանոնք։

Իսկիւտարցի 12 տարեկան Իսլամ պատանի մը, որ, ինչպէս կը յիշուի, Բաղդատի 23րդ օրէն ի վեր կորսուած էր, երեւան ելաւ։

Սա վերջին ծայր ստահակ լինելով, քանի մ'օր այլեւայլ փողոցներ թափառելէ յետոյ իրեն նման ուրիշ տղու մը հետ Երէն–գիւղ կանցնի եւ հոն փէչէ մը կը մնայ, ուր ձերբակալուելով Գալատիոյ ոստիկանութեան կը զրկուի։ Դեռատաս ստահակը կերպով մը կը յաջողի փախչիլ, բայց վերջապէս կը ձերբակալուի Ֆաթիհի կողմերն։

Այս հինգշաբթի ժամ 3ին մինչեւ 3 զինեալ գողեր Ղալաթիա Օսմ. Կայս. Պանքայի եւաւ Լալէլի փողոցին մէջ տուն մը մտնելու փորձ փորձած ժամանակին, մօտակայ սրճարանէ մը տեսնուելով, երկուքը փախան եւ մին ձերբակալեցաւ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ

ԱԺԱՆՆՍ ՀԱՎԱՍ

ՏԵՍՈՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՑՈՒԵՐԱՑ

Կաթէֆ յի, 7 օգոստոս

Աւստրիոյ Կայսրն եւ Կայսրուհին երեկ երեկոյ ատ հասան։ Ֆրանց–Յոզէֆ Կայսրն այցելութիւն տուաւ Վիլհէլմ Կայսեր, որ խակոյն փոխադարձ այցելութեան գնաց։

ԱՆԳԼԻԱ

Լոնտրա, 7 օգոստոս

Գահիրէէն կը հեռագրեն տա Պրանտրա թէ Ալէքսանդրիոյ ռմբակոծման և հրիզման տուգանաց վճարումը պիտի սկսի յառաջիկայ երեւաշաբթի։

Կրեսփոխանաց ծողովը քուէարկեց Հընդկաստանի նախարարութեան եռնացոյցն, որոյ վրայ յաւելեալ էր երկու միլիոն անգլ. ոսկի անգլօ–ռուս խնդրոյն առթիւ։

ԵՐԵՍՓ. ԲՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ Ի ՖՐԱՆՍԱ

Փարիզ, 7 օգոստոս

Կրեսփոխանաց ծողովոյ ընդհանուր ընտրութիւնք պիտի կատարուին յառաջիկայ հոկտեմբեր 4ին։

ՅՈՒՆՈՍՏԱՆ

Աթէնք, 7 օգոստոս

Թագաւորն այսօր այցելութիւն տուաւ Տիւբէրէ ծովալային և վարիչ Աւստրիա պիտի ուղեւորի։

Կէս–պաշտօնական լրագիրք կը հաստատեն թէ կրօնական և դատական նախարարք, որք հրաժարական տուած էին, եւ առեր են զայն։

ԴՊՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՅ ԳՈՐՍԱ

Գալաթիա, 26 Յուլիս

ԸՆԹԱՑՔ ԹՂԹԱՏԱՆԱԿԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պտնդարի)	...	114
3 » » » (վճռական)	...	110 5/8
3 » Բարիզ » (պտնդարի)	...	22 75
» » » (վճռական)	...	22 82 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹԹԱԹՈՒՑ

Օսմանեան Բանկայի

		Դահեկան
Երեկ երեկոյ գոց.	(Միաց. Դ. Սէրի	17 27
Պօղոսյան գոցուելէն վերջը	»	17 29
Բէրայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	17 26
Բարձրագոյն գին	»	17 27
Նուազագոյն »	»	17 24
Կէս օրին	»	17 26
Փոխառութիւն 1858)	Ա. Սէրի	Դ. Գ. Ա. Ո. 31 1/2
» 1862)		
» 1860)		
» 1863)	Բ. »	» » » 17 3/8
» 1872)		
» 1865)		
» 1869)	Գ. »	» » » 17 25
» 1873)		

Ինընիթիէ Եգիպտական

Երեկ իրիկուն գոցուեցաւ	...	72 20
Այս առաւ. բացուեցաւ Գ. Կ.	...	72 22 1/2
Կէս օրին	...	72 22 1/2

ԲԱՆԿԱՆՏՈՒՄԵՐ

Սօրիէթէ ժ. Ներսէս	Գ. Կ.	Ամբ.	3 52
Քէրէմ ժ. Ներսէս	» »	Օսմն.	» 6 70
Պանք տը Գլոնտ	» »	»	» 4 75
Ռօս. Շանմ է Քարէօր.	» »	»	» 3 65
Թրամէյ	» »	»	» 295
Բուլղարի երկաթուղի		Ֆր.	41 1/2
Օսմանական տը Բրիտանիէ		»	—
Բանքէթուղթ Լաբրիտի		»	60

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի		դրշ.	100
Ֆրանգնոց		»	88
Անգլիական ոսկի		»	110 24
Բալ. Խրթերթալ		»	90 18
Քրիմիոց		»	51 20
Դուպլիթղթագրամ		»	9 11
» տրծաթի		»	89 20
Ֆիորին		»	9 —
Մէճ. արծ. (տարբ.)		»	107 38
Վենցոց		»	102 30
Չինգոց		»	102 25
Մէնթալիք		»	99
Պրինտ		»	—
Թղթագրամ		»	—

ՏԻՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա, 7 Օգոստոս, ժամ 5 վայր. 45 երկրդ.

Անգլ. քանսոլիտ		99 3/4
Դոմ. » Սէրի Դ.	բացուեցաւ	16
» » »	գոցուեցաւ	16
» » »	Ա.	31 1/4
» » »	Բ.	17 3/4
» » »	Գ.	16
Օթոման 1871		68 1/4
Փոխառութիւն 1877		81
Պանք Օթոման		10 3/4
Բուլղարական փոխառ. 1873		92 3/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)		65 1/4
» առանձն. (բրիվիլեժիէ)		86 1/2
Տարբա Սանիէ		62 3/8
Տամանիալ (փոխառ. Բրէյիլ)		84
Հունգարական պարտատոմսագիր 4%		— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 386

Վիէննա, 7 Օգոստոս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ		125 75
Օսմանեան երկաթուղի		20 20

Բարիզ, 7 Օգոստոս, ժամ 3 վայ. 45 երեկոյ

Ֆրանսական Ամորթ 4 1/2 %		108 75
» » 3 %		80 72 1/2
Օսմանեան քանսոլիտ Սէրի Դ.	բացուեցաւ	16 15
» » »	գոցուեցաւ	16 15
» » Սէրի Բ.		17 60
» » Գ.		16 01
Օսմանեան երկաթուղի		40 37 1/2
» Բէյրութի բանկէթուղթք		— —
Պանք Օթոման		549 37 1/2
Դրեսմի Լիոնէ		533 75
» Յունիէ		1305
Բանկէսոսն Լիոնի		1231 25
Մուէզիի Ջրանցք		1995 —
Ռուսական 5% 1877 թ		97 1/4
Իտալական Ամորթ		94 35
Եգիպտական միացեալ		325
Պպանական (արտաքին)		57 1/4
Բրէսիլիէ Թուրք		386 25
5% Հելլենական		325 —
Զէք Լոնտրայի վրայ		25 11

Պ. ՖՐԻՏՐԻԽ ՄԻՒԼԼԵՐԻ ՅՕԴՈՒՄԸ

Պ. Ֆրիտրիխ Միւլլը Հայկական գիտնականն ի Վիէննա, «Էնսիքլոպէդիէ հնաբանութիւնք ֆէյ–ը ոէն Օրիէնթ» ամսագրի մէջ հետեւեալ տողերը կը հրատարակէ հայր Սերուվբէ Տէրվիշեանի վերջերս հրատարակած Հնդկա–Եւրոպական Նախալեզու անուն լեզուաբանական գործին առթիւ։

Հայոց ազգը վաղ քրիստոնէութիւն ընդունած լինելով, միշտ առաւել Արեւմուտքի կողմն է կանգնած եղել, քան թէ Արեւելքի, և այս հանգամանքը, ինչպէս որ տեսնում ենք նորա ողբերգական միջադէպերով հարուստ կեանքից, ծառայել է իւրաքանչիւր քաղաքական դիրքորոշման, որն որ դժբախտաբար ազգի կատարեալ ցրումամբ է վերջանում։ Եւ ինչքան որ վասնում են հայոց ազգի արտաքին պայմանները, այնքան առաւել նա խորասուզվում է իւր ներքին կեանքի, և վերջին ժամանակներս՝ իւր ճոխ գրականութեան մէջ, դրանում գտնելով մի կուռուն, որն որ միջոց է տալիս նրան զուարթի նայելու ապագայի վրայ և մասնակից լինելու քաղաքակրթութեան բարիքներին, մինչդեռ միւս հին ազգերն նեխութեան մէջ են ընկնում և կորչում։

«Ցորդէ հետէ արդի լեզուագիտութիւնն ապացուցեց, որ հայերէնը հնդօ–գերմանական լեզուների կարգին է պատկանում, ուրեմն և Եւրոպայի լուսաւորուած ազգերի լեզուներին ազգակից է, հայոց ազգն էլ իւր ինքնուրոյն լեզուով և հին գրականութեամբ մեզ յատկաբար մտնեցաւ, և մենք չենք կարող նոյն համակրանքը չընծայել այս ազգին, ինչ համակրանք որ ընծայում ենք, օրինակ, միւս գերմանական ազգերին, Ռոմանոներին և Սլաւերին։

«Վերը յիշուած առաջին գրքի հեղինակն՝ Հ. Տերվիշեան, որ Վիէննայի Մխիթարեան ուխտի միաբան է և մի քանի տարիներէ ի վեր Կ. Պոլսի մէջ է աշխատում, արդի համեմատական լեզուագիտութեան մի տեսութիւն է տալիս հայերէն լեզուով։ Նախկին և նոր քերականական հետազօտութիւնից տարբերութիւնը պարզելուց յետոյ՝ նա անցնում է քննելու լեզուի դանձը, որ ամփոփուած է ձայնարկութիւնների, նմանաձայնական բառերի (ոնոմատէ), գոյական հնչիւնների և գաղափարներ արտայայտող արմատների մէջ։ Վերջիններս բաժանվում են բայական և անուանական արմատների։ Հեղինակը մանրապատում

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ
«ԱՐԵՒԵԼԻ» Ի

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ
«ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՑԻ» ՄԱՍԻՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յուլիս

Մեր կեանքը մի քանի մտքեր այնքան պարզել և ակն յայտնի է դարձրել, որ նը-րանք այլ ևս կարիք չեն զգում ապացու-ցութեան մէջ։ Օրինակ, ոչ ոք, ի հարկէ, չի սկսի վիճել այն ակներեւ ճշմարտութեան դէմ, որ Եւրոպայնոցին զարգացած գլուխնե-րի և հասարակ, մի քանի անգոյն գրքեր կարդացածների մէջ տիրում է անուսման զանազանութիւն։ Նրանց իւրաքանչիւր արտայայտած խօսքը լուսաւորած է գիտու-թեամբ և կրում է իր վրա, այսպէս ասած, նրա գրօշմը։ Նրանց յայտնած ամեն մի միտք, ինչ առարկայի և վերաբերի նա, միշտ առաւել և առաւել ապշեցուցիչ է, քան անկիրթ և տգէտ գլխից դուրս եկած մի երկար փիլիսոփայութիւն։ «Ապշեցուցիչ է գիտակցութիւն լուսաւորված մարդու յայտնութիւնը — ասում է մի յայտնի ռուս քննադատ (Անգարիչեւսկի)— հարկաւոր է նրանց բերան բանալ հենց միտքն անգամ ամենահասարակ, զարտակ բաների մասին և գուք նրան մէջ կը գտնէք անհա-մեմատ աւելի կրթուած պարուներութիւն, քան անուսում և ոգէտ Միտրոֆանների ան-նաղուրջ ճառերում»։ Այդպիսի զարգացած մարդիկների մէջ հարիւրութիւն է զգում ամեն մի փոքր ի շատ ինքնաճանաչ ազ-գութիւն, երբ նա յայտնութիւն է յայտ-նում լուսաւորութեան վրա։ Անանց այդ-պիսի մարդկանց, անմոռ է մի որ և է ժո-ղովրդի մէջ մի որ և է յառաջադիմութիւն։ Այո՛, միայն այն ժամանակ կարող է առաջ գնալ լուսաւորութեան գործը մի յայտնի ազգութեան մէջ, երբ նրա հասարակական մտքի գեկավարները ունեն իրանց բռնած տեղի պահանջած բարոյական և մտաւորա-կան յատկութիւնը, երբ նրա գրականա-թիւնը — իր լայն մտքով — առաջնորդվում է կրթված մտքի և ճաշակի տէր մարդկանց ձեռքերով։

Մի այդպիսի տրեւմտեան-եւրոպական զարգացմամբ մարդ ահա մեր տարի ու կէս է որ ձեռնարկել է մեր մէջ և այժմ ամենայն ժրաջանութեամբ շարունակում է մի հրատարակութիւն — «Մանկավարժա-նոց» անուամբ։ Մտրիկից ծանօթ լինելով եւրոպական առաջնակարգ լեզուների հետ և, ուրեմն, առիթ ունենալով անգադար յարաբերութեան մէջ լինել լուսաւոր ազ-գերի լուսաւոր մտքերի հետ, Հ. Խորէն Սահակեանն, Մանկավարժանոցի ներկայ յարգե-լի խմբագիրը, սրանից դեռ հինգ տարի առաջ ուղեւորվում է արտասահման Վեհա-փառ Գէորգ Դ-ի անմիջական յորդորանօք, այնտեղ մանկավարժութիւնը ուսումնասիրե-լու նպատակով։ «11 ամիս անցուցելով ան-դադար Եւրոպայի զանազան դպրոցների և դպրոցական անձերի մէջ», — կարդում ենք նրա մի գեղեցիկ «Եւրոպացիների դպրոցա-վարութիւն» յօդուածի մէջ[1] — նա այժմ վերադարձած՝ ձեռնարկել է այդ իր ու-սումնասիրած մանագիտութիւնը վերա-բերեալ մի հրատարակութիւն։

Այնուն անգամ, երբ ինձ պատահել է ըսել թէ այս ինչ հոգեւորականի խմբագրու-թեամբ մեր կամ թէ Ռուսաց մէջ լոյս է տե-սել այս կամ այն գրուածը, ես, խոստո-վանեմ լինի, մի տեսակ կասկածանքով եմ վերաբերվել դէպի նրանց արժանաւորու-թիւնը։ Նոյն անվերջնական բարոյական-նութիւնը, նոյն վարպետական ոճը, իսկ նամանաւանդ այն անպատեհ ան-համարհանքը, որը ցոյց են տվել այդ հո-գեւոր մարդիկը դէպի գիտութեան և նրա մաքառողների խօսքը, ինչպէս ուզում էք, բայց կարող էին մարդուս վերջապէս . . . ձանձրացնել, աւելին չասելու համար։ Այդ-պիսի գրուածները միշտ գժգոհութիւն են յարուցել մտքի ետեւից ընկնող ընթերցողի մէջ։ Նրանց կարդացել են մի կամ երկու երեք տասնեակ մարդիկ և ասա, յետ այ-նորիկ, առանց տատանման, մտանվել են դիւանատուններու . . . ։ Բայց «Մանկա-վարժանոցը», — որի մասին ես մտադիր եմ այսօր մի երկու խօսք ասել Աբէ-նեզի մէջ— լինելով մանագիտական թերթ և խմբա-գրելով մի այնպիսի զարգացած մարդու ձեռքով, ինչպիսի է Հ. Խ. Սահակեանն, ես-ուի է բոլորովին մի որ և է դիպուածական տարբ-կանք, կարծես, չի կարող անցնել իւր աշ-խատասիրութեանց մէջ։ Նրա յարգելի խմբ-բագիրը, կարծես, ուզեցել է մի աւելորդ անդամով ես ապացուցանել թէ բոլորովին անհեթեթութիւն է կարծել, որ ճշմարիտ քրիստոնէականութեան հետ անկարելի է և ջերմ հեռուզ լինել դիտութեան ճայնին, որ իբր թէ դրանցից մէկը բացառում է միւս-սին։ Ճշմարիտ ատուած պաշտութեան հետ նա միացած ունի և լուսաւոր եւրոպացու պայծառ, առողջ միտքը։ Այդպիսի հոգե-ւորականների թիւը մեր մէջ դժբաղդաբար աւելի քան թէ սահմանափակ է։ Նրանք կատարում են մեր մէջ դեռ ես ճիշդ բա-ցառական դերեր . . .։

Մանկավարժանոցի խմբագիրը կարող է միս կողմից ծառայել մեզ իբրեւ եռանդի, համբերութեան տիպար։ գուք հարիւ թէ կարողանաք մեր գրական գործողների մէջ գտնել մի այդպիսի ծայրայեղ-անձնանուէր, գործօն անձնաւորութիւն, որը գիտենար այդ ատիճան սերտ կերպով միացնել միա-սին խօսքը և գործը։ Ես չատ թէ քիչ ծա-նօթ եմ մեր հրապարակական գործողների հետ, բայց, ուրիշն ասած, ես մինչև այ-սօր չեմ ճանաչում այնպիսի մէկին, որը այնքան հոգի և միտք ի գործ դնէր իւր միանգամ ստանձնած գործի վրայ, ինչպէս դա անում է մեր պատկառելի վարդապե-տը։ Պէտք է ուշադրութեամբ կարդալ նո-րա խմբագրական յօդուածները տեսնելու համար օրքան ոգեւորութիւն, օրքան ե-ռանդ է շնչում նրանց իւրաքանչիւր մի տո-ղը։ աւելացրէք ասածս վրայ, որ նրանց իւրաքանչիւր նախադասութիւնը տոգոր-ված է —եթէ կարելի է այսպէս ասել— դիտութեան լուսով և թեղադրված առողջ հոգեկանով— և գուք կ'ստանաք մի մտա-ւորական գաղափար այդ հանուտ հրապա-րակութեան մասին։

«Մանկավարժանոցը» հանուտ դիրքով և ծառայով մի մանկավարժական ամսագիր է, փոքրագիր, որի բոլոր թիւերը կազմում են միասին տարին մօտ 550 երեսներից բաղ-կացած մի մեծ հատորի գիրք[1]։ Թուղթը ընտիր, տիպը մաքուր, տարեկան գինն էլ 3 ռուբլ—ահա բոլորը՝ ինչ որ կարելի է ա-սել նորա արտաքին արժանաւորութեանց մասին։

Բայց ես դեռ չը վերջացրի իմ խօսքը այդ հանդիսի մասին։ ես մտադիր եմ մի երկու խօսք ևս աւելացնել նորա լեզուի, ուղղագրութեան, բաժանորդների քանակի մասին, որպէս զի յետ այնու կարելի լինի հան-գիստ թողնել ընթերցողին։

Այլ ևս կ'աշխատիմ աւելի համառօտա-բար արտայայտել։ Լեզուի մասին, ինձ մը-նում է միայն մի քանի այս տեսակ պատ-ուական ածականներ շարել այստեղ՝ թե-թեւ, մաքուր, կոկված, գողտրիկ։

Մեր բոլոր պարբերաթերթերի մէջ—որի միակ շուրջում է կեդրոնանում մեր այժմ-եան հասարակ բոլոր գրականութիւնը—ես միայն ճանաչում էի «Մշակին», որը մի ա-ռանձին ուշադրութիւն էր դարձնում լեզ-ուի ձեւերի, արտայայտման եղանակի, ինչ-պէս և լեզուի մէջ ներմուծած օտարազգի կամ ժողովրդական նոր բառերի և անուն-ների ուղղագրութեանը վրայ։ Ռուսաց պար-բերական գրագիտութեան մէջ այդ ուղղու-թիւն հետեւում էր ամենայն խստութեամբ միայն Կրաեվսկին–Ռուսաց այդ դրականա-կան քաջամարտիկ վաստակաւորը, «Զայնի» և «Հայրենական Յուշագիրների» խմբագիրը, որոնք այդ գրականութեան մէջ բռնում էին ամենանշանաւոր և ամենափառաւոր տե-ղերը (2)։ Ես միայն Արծրունու յօդուած-ների մէջ եմ պատահել ամենախիստ յարա-բերութիւն մտքի և բառերի մէջ։ Ուրիշ խմբագիրները այդ պիսի Ընդ բառերի վրայ, դժբաղդաբար, ժամանակ չունեցան ուշա-դրութիւն դարձնել։ Վերջին կէտի—բա-ռերի ուղղագրութեան—վերաբերմամբ մեր մէջ մանաւանդ անշուշտ գտնուելու են դա-զուն։ այդտեղ գուք կը հանդիպէք մինչեւ բառը զանազան կերպով գրած—ի և ը, ա և բ, օ և ո եւ մէկը միւսի տեղի անխտիր գործադրած (3)։ Իսկ մի պարոն այնտեղ թողլ է տալիս իրան մինչեւ անգամ խառ-նել ֆ և պ, ֆ և է, ղ և ա տառերը։

Մշակի բառագրութիւնը եթէ ոչ միայն աւելի խստութեամբ—կարելի է նկատել և Մանկավարժանոցի մէջ։

Հարկաւոր է արդեօք խօսել Մանկավարժա-նոցի մէջ զետեղած յօդուածների արժանաւորութեանց մասին։ Յօդուածքս սկզբում ես, որքան ներում էր նամակիս ծաւալը, գծագրեցի մի քանի խօսքով նրա խմբագրի հոգեկան կողմը, իսկ խմբագրի այդ յատկանիշները, կարծեմ կարող են մի ամենագեղեցիկ գրականի լինել այդ հան-դիսի մէջ գտնված յօդուածների արժանա-ւորութեանց մասին, այնպէս որ ես մի ա-ռանձին հարկ չեմ տեսնում դրա մասին երկարացնել։ Ահա մէկը միւսից, ըստ բա-վականութեան, հետաքրքիր յօդուածներ— Շարժական մատենադարան, Եւրոպացիներ-ի դպրոցավարութիւն, Ինքնակրթութիւն գրքերով, Դպրոցական առողջապահական հարցեր, Դիտերիգի մտքեր, Բարոյական ուղեցոյց ուսուցիչների համար, և այլն եւ-այլն։ Եւ այդ բոլորն այնքան գիւրընկալի և գիւրիմաստ ոճով չարադրած են, որ կողմնակի մարդն անգամ առանց ձանձրա-նալու կարող է ամենայն հետաքրքրու-թեամբ ու բաւականութեամբ կարդալ նը-րանց։

Բայց չը նայած այդ բոլոր առաւելու-թիւններին և արժանաւորութեանց, մեր հայ ուսուցիչը ամենայն յամառութեամբ չարունակում է մինչեւ այսօր անտարբեր և սառնասիրտ մնալ դէպի մի այնպիսի հրատարակութիւն, որը յատկապէս ստեղծ-վել է իրան համար։ Մեր մէջ ամեն մի ա-նուսում կամ կիսակիրթ մարդ դիտէ միայն «միջոցներ» գործ դնել իր ձեռքը դեղու-ուսուցչութեան պաշտօնը, բայց, երբ մի անգամ նրան աջողվեց հասնել այդ իր դի-տաւորութեան, նա ալ ևս հոգացողու-թեան ուրիշ առարկայ չունի։ Նա չի աշ-խատի կատարելագործվել այդ իր ստանձ-նած պաշտօնի մէջ, կարդալով գրա հա-մար մի քանի դիրք կամ հեղինակութիւն-ներ այդ մասնագիտութեանը վերաբերեալ։ հասկանալի է, թէ ինչպիսի սարսափելի կերպով կարող է ուսուցչի այդ ոգիտու-թիւնը ազդել կրթասաէս մեր մանկավար-ժական գործի վրայ։ Աշխատակիցների կա-տարեալ բացակայութիւնը փայլում է այդ հանդիսի մէջ իր ամեն ուժով։ 550 երես-ներից բաղկացած ծաւալով դրքի 500ից ա-ւել երեսը բացառապէս պատկանում է նրա խմբագրի անմիջական գրչին, որոնք ինքն-ուրոյն կամ թարգմանական յօդուածներ են ներկայացնում։ Խմբագրական այդ ատ-ենման ծանր վաստակը կարելի է տեսնել միայն մեր հայերի պէս ոգէտ և յետընկած ազգի մէջ, ուր անտարբերութիւնը ընդ-հանուր է, ուր մտաւորական աշխատանքը դեռ ևս մի տեսակ ժամանակագրական սխալմանք է կազմում մեր մտաւոր զար-գացման պատմութեան մէջ։

Բաւական չէ, որ մեր յարգելի ուսու-ցիչները երբէք չեն մտածում աշխատակցել այդ թերթին, ուղարկելով նրան գոնէ մերթ-ընդ մերթ իրանց դիտողութիւնները և կարծիքները այս կամ այն առարկայի մա-սին, նրանք այն ատենան ևս անշարժ են, որ այնքան բաժանուդ, գոնէ, չեն գրվում, որպէս զի մի կերպ թեթեւացնե-վեր տպագրական ծախսը, որը, իր ամեն ծանրութեամբ, կրկին ընկած է «Ման-կավարժանոցի» խմբագրի վրայ։ Բայց դա արդէն անխիղճ սառնասրտութիւն է . . .։

ՄՐՀԼ

(1) Տես «Մանկավ.» թիւ 2 և 3, 1884թ.։ Այդ յօդուածը խոստանում է վերջանալուց բաստիկ հետաքրքիր լինել, միայն մեզ անյայտ է, թէ ինչու նրա միայն մի այդքան փոքրիկ կոորը լոյս տեսաւ մինչեւ այսօր։

(1) Եթէ ընդունենք, որ նորա 5–6 թիւերի փոխարէն է տրուած «Համակեդրոնական ծրագիրները»։

(2) Դրանք այժմ չը կան, դադրեցրած են կառավարութենից։

(3) Նոյնը կարելի է տեսնել առանց բացառութեան և մեր միս թերթերում։

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Օրթագիւղ, 26 յուլիս

Մեռելոց յիշատակը — Տիրագեղեց եկեղեցա-կան մը.— Եւեմիա եպիսկոպոս.— Հին բարեկամներ.— Պարահանդէս.— Ազգիմնի պարահանդիսի օգուտ-ները.— Ազգանուէր Ընկերութիւնը.— Հակատագիր։

Անցեալ ուրբաթ իրիկուան դէմ երբ կ'անցնէինք Օրթագիւղ այն տան առջեւէն ուր վախճանեցաւ Ներսէս Սրբազան, տրխ-մութիւնը գալարեց մեր սրտերը։ Դուրս կ'ելնէին այդ տունէն այլազան անձինք, բարեպաշտ յիշատակ մը չէր որ անդր ա-ռաջնորդած էր անոնց քայլերուն Շահագի-տութիւնը, մարդկային եռանդեան այդ գերազոյն զոսպանին, ի մի կը բոլորէր այդ սրբավայրին մէջ Հայն, Հրեայն, Յոյնը։ և-կած էին դարձ գնել հանգուցեալ Հայրա-պետի ժառանգութիւնը։

Ցիր և ցան եղան, կորսուեցան ամէն ինչ որպ վրայ յիշատակ մը դրօշմել էր Ներսէսէ։ Սակայն էր ապչինք։ մինչ այս-պէս անհետ կը լինին նիւթական յիշատակ-ները, մինչ անձկանօք կը հարցնենք օր ձեռքերու աւանդ մնացին այն թանկագին թղթերն, որք ոչ միայն մեր ժամանակ-կից պատմութեան կենսական էջերը կը կազ-մեն այլ և ուղեցոյցներ պիտի հանդիսանան մեզ—հո՞ղմը թէ հուրը եղան անոնց ժա-ռանգորդք—, ահա ինչ որ կը տեսնենք մեր բարեյական շրջանակներու մէջ, առ մեզ կաբ-ծես համոզում դոյացնել կուտայ թէ Հայոց նշանարան է

Գնացեալքն ի գերեզմանս հաւատս ինչ ոչ պահանջեն։

Եւ եկեղեցականք են կարծես որ բարձր կ'ուզեն բռնել այն դրօշակն որպ վրայ սեւ գիրերով դրօշմել է սխալբ նշանաբանը։

Բայց թող ընդունի այդ նշանաբանն ով որ կ'ուզէ, սակայն կայ Հայրիկ մը որպ սըր-տին չէպիր ամէն դգացում որ յիրեն կը երէ մեր սրտերու տարութեանց և տարունա-թեանց նշանն։

Երկու շաբաթներ առաջ տեսանք Հայ-րիկը։ իւր խորհրդաւոր աչքերու մէջ կը գոլար տարութիւն մը որ աւելի սրտագրաւ կ'ընծայէր իւր դէմքը։ տխուր էր յոյժ զի սիրելի բարեկամ մը—գրեթէ եղբայր մը—կորուած էր, Երեմիա եպիսկոպոս։ Շի-տանն ըսելով տարին անգամն էր որ տա-սերեին կը տեսնէինք կուսակրօն մը որ կը վչտանար ուրիշ կուսակրօնի մը մահուան վրայ։ Այդ երեւոյթն արժանի էր արձա-նագրուելու։ եթէ արտասուողն Հայրիկ չը լիներ։ թէպէտ առանձնաբորհե վ դասու պատկանող, բայց և այնպէս Հայրիկ կը կրէ իւր սրտին մէջ ամէն ազնիւ, ամէն սուրբ զգացումներ։

Եւ մենք ալ իրեն հետ կը ցաւէինք։ խե՛ղճ Երեմիա եպիսկոպոս որ կը նշմարէր պատ-ուիրաբերական գահն իւր հրապուրիչ կրկնե-ռեւոյթ մը։ Եւ սակայն ինչո՞ւ ինքն ալ արդ-ժանի չլինէր կոխելու այդ գահուն պատ-ուանդաններուն վրայ։ Մեծաւոր էր, վասն վասն զի ի հայրենիս մ'աշխատէր հեռու բիւ-զանդական նրբութեանց եւ մեքենայու-թեանց բնավարէն։

Բայց ինքն իւր բնավայրը կը սիրէր, իւր Վանն ու Կոստը։ Շատ անգամ ըսուած է —այնքան ըսուած է որ մեր գրագէտներն իսկ կրնան անեղիլով զայն գործածել ինչ-պէս կը գործածեն Թոռ պէ որ Նոմ Նոռ պէ—թէ հայրենեաց փուշն ու չոր հացը քաղցրա-գոյն են քան օտար երկրի վարդն ու հա-մադանքն, ճշմարտութիւն մը զոր ոչ ոք ի մէնք կ'ուզէ կասկածել, եթէ տխուր հարկը չը-սիպէ առ այն։ Այդ ճշմարտութեան սիր-հար էր Երեմիա եպիսկոպոս։ Սակայն փոքր ինչ փոփոխութիւն կը ներմուծէր բա-ռերու մէջ։ Լաւ է, կ'ըսէր, ազգային եկե-ղեցական մեքենայութիւնը քան ձեր ըս-կեպտիկեան ոգին։ լաւ է, կ'ըսէր, մեր Ե-ղեկը քան ձեր Հիւսկոն։ Երբ օր մը իրեն կը խօսէին Հայաստանցի վարդապետներու տը-գիտութեան վրայ — ակնարկութիւնն իրեն էր —

— Էհ, կ'ըսէր իւր խոշոր ձեռքը զար-նելով իւր մեծ փորին, ես Կոստց անապա-տը Ոդրի Աստուծոյ եմ լուծեր, Ոդրի Աս-տուծոյ։ ձեր դպրոցներէն ելնողներն եթէ կրնան թող մէկ տողն ալ իրենք լուծեն ես մեղ հետ այն տեղ աշխատին։

Երեմիա եպիսկոպոսի համար Ընծայա-բան, Կղերանոց միայն Կոստց եւ անոր նը-ման անապատներն էին։ և եթէ Ազգ։ ժո-ղովոյ մէջ լինէր, անշուշտ իւր խորհրդ ձայ-նովը պիտի գոչէր ինչ որ կը հաւատար, հա-կառակ իւր սրբակրօն պաշտօնակցաց այք երբեմն կ'ըսեն ինչ որ չեն հաւատար։

Այդ խորհրդ ձայնը դեռ չատերուս ա-կանջին կարծես կը հնչէ։ եւ իւր ս'ոքան գործերը տեսանք ու լսեցինք յորս օտարաց առաջ չէր նկատեր ինքզինքն իւր սարուկ մը, այլ իւր հայ և բարձրատեսիկ եկեղեցական այնքան սէգ էր մինչեւ իսկ կարելի էր կար-ծել թէ յոյն եպիսկոպոս մը լինէր։

Այդ բարեկամի կորստեամբ ս'ոքան յի-շատակներ կը զարթնուն Խրիմեան Սրբազա-նի մտքին մէջ, և ժպիտ մը կը բերեն մար-դուս ճակատագրին փիլիսոփայութիւնն ու-սումնասիրողներուն Տանջանքը, քանի տա-բիներ առաջ չատ օր մէկ սենեակի մը մէջ կը գտնուէին Իւսկիւտարայ Խաչ եկեղեցւոյն տունը երեք անձինք։ մին Խրիմեանն էր, ու-րուն հարուստ անցելոյն արդէն նախան-ձորդ կրնար լինիլ նորա ապագայն։ Անդ էր Երեմիա, նա ալ պարզ վարդապետ և ե-բաղդ «մեծ ապագայի», միշտ ապաւինած իւր Նարեկին։ Ասոնց մօտ կը տեսնուէր մի երիտասարդ, կովկասեան բարակ գլխարկ մը գլուխն. հարիւ կը խնդար. նիհար էր։ դէմ-քին վրայ թեթեւ տխրութիւն մը կը ծա-ծանէր։ ինքն արդէն համակրելի էր, թէ-պէտ բաղդն իրեն չէր ժպտած, եթէ երբէք բաղդն շնորհաց արժանի եղած լինել չհա-մարուիր գաղափարի համար վտարանդի թափառիլն։ Հայրիկի մօտ եկողները կը հարց-ընէին։—Հայրիկ, խնդրենք ս'ովէ այս ուռ-սիոցի երիտասարդը։—Եւ Հայրիկ ժպիտով մը կ'ըսէր.

—Դա՛, մի խեղճ տիրացու է. գրեր կուտամ որ օրինակէ։

Հայրիկի, ինչպէս նաեւ նաեւ իւր տի-րացուին աչքերն, անշուշտ ապագայն խորհուրդելու կարող չէին։ Երբ հիւրերը կ'երթային եւ իրենք մենակ կը մնային, իրա-րու հետ կը ծիծաղէին պէրցա՝ ածականին վրայ։ Այդ երեքն ալ ազգատ էին, բայց իւ-րենց սրտերը մեծ զգացումներով հարուստ, Հակադրութիւնք բաղդի։ Երեմիա կը վախ-ճանի ճիշդ այն պահուն երբ մեծ վիճակի մը կառավարութեան կոչուած, կարող պիտի լինէր ընդարձակ ասպարիզի մէջ ցոյց տալ իւր գործունէութիւնը։ սակայն այն-քան կանուխ չվախճաներր և կր՝ուտենէ իւր ներքնս ընկերակցաց միջակից հանդիսանալ կաթողիկոսական ընտրութեան։ և յաղ-թանակը կը մնայ 66 ի խեղճ պէրցարէ։ Խը-րիմեան միայն ժպտա մը ունի զի չատ մեծ փորձառութեամբ գլուխ թէ՝ փոփոխութիւնք ապերախտ են անոնց դէմ որ ամէն բանէ առաջ իրենց հայրենիքը կը սիրեն։ Իսկ նախկին Գարեգինը, այժմ Մելքիսեդեկ Սրբազան, վստահ ապագային վրայ, անխռով կ'սպասէ։ Իզէ՞ թէ այդ մեծ ապարիղին մէջ միշտ կենդանի պահէ երիտասարդական աւուրց սրտի բարախումներն և իւր վրայ միշտ հովանի լինի Խրիմեանի ոգին։

Արդէն հեռու է այն անցեալը և չենք գիտեր թէ օ՞րքան մօտ է այդ ապագայն, ուստի թողուենք զանոնք և ակնդէտ լինինք ներկային։

Ներկայն պարահանդիսին է, անդիմակ պարահանդիսին զոր կրնանք նկատել իբր մի փոքր ցուցահանդէս ընկերութեան զա-նազան կարգի դասուց նիշխներու։ Ի՞նչ պատուական միջավայր այդ պարահանդէսն ուր ի մի ուիիսվեալ կը տեսնենք այնքան ե-ղերերգութիւնք և կատակերգութիւնք։ Այդ ուզատ օրի մէջ, անդիմակ դիմք և փոքր ինչ անդիմակ սրտով պարն օ՞քան անտանելի կ'ընծայէ ձմեան փոշիատատ պա-ղերու յիշատակն։ Ա՞ւր էր թէ մշտական լի-նէր այդ պարահանդիսի հատատատութիւն և մենք կարող լինէինք ամէն տարի մ'որ-գիտակով զնել, ինչ որ ամսան պարա-հանդիսին, մեր ընկերական խաւերու ըրած յառաջադիմութիւններու։ Արդ եօք քա-նի՞ներ գտնուեցան այք լաբդ կերպով խոր-հած լինին թէ ի՞նչ մեծ առաւելութիւն-ներու պարգեւիչ է այդ գիշերս հանդէս։ Անօգուտ չեմ համարիր մատնանիշ ընել մի քանի կէտեր, որով կարող կ'ելլամ ապացու-ցանել թէ ամսան անդիմակ պարահանդէսն ո՛չ միայն Հայաստանի քոյրերու օգուտներ պարգեւելու սուրբ կոչումն ունի, այլ նաեւ Պոլսոյ ամէն կարգի դասուց առատօրէն բա-րիքներ կը շնչայէ։

Ամսան պարահանդէսը բարձր կոչում մը ունի որ է հնարաւոր ընծայել մեր ամոթ-խած կոյսերուն իրենց մէկ անբռնաբարելի սուրբ իրաւունքի գործադրութիւնն։ Ցան-յիշատակ ժամանակաց անտի մենք զօրաւոր սեռի անդամքս իրաւունք մը կը վայելենք ընտրել մեզ համար մեր սրտին սիրած աղ-ջիկն և առ այս հանելու գիւրին միջոց մը կայ, այն է դուռնէ դուռ բախել և գրա-նել զայն «որ մեր կողէն չիհուած է», պարզ ըսելով աղջկանոյ ոքանչելի հիմնարկու-թիւնն ունինք և սակայն չնորհիւ այն ա-զատամիտ և մարդասիրական գաղափարնե-րուն որք Եւրոպայէ առ մեզ կուգան, այդ գաղափար հիմնարկութիւնը վատնգի ներ-քեւ է, մանաւանդ որ ուսեալ և բա-ղեկիրթ երիտասարդի մը ամսի դէմ ամ-բոխին վայելել այնպիսի իրաւունք մը յորմէ զուրկ է փափուկ սեռն։ Ինչ որ մեր իրա-ւունքն էր, այժմ բարբարոսութիւն կը կոչուի և չնորհիւ հաւասարութեան գաղա-փարին, աղջիկներու ալ իրաւունք տրուած է ընտրել իրենց ամուսին։ Ազատ են, թո՛ղ փնտռեն և գտնեն։ — Ա՜ա՛ղ, այս է աշ-խարհս, իրաւունք մը ունենալն միշտ եթէ մխիթարութիւն մ'է, բայց ամէն ատեն գո-հունակութիւն մը չէ։ Ի՞նչպէս այսիրաւուն-քը գործադրեն մեր մատաղ կոյսերը։ Նոյն իսկ Մաքսիմի և Սիրանոյշի ճարտար հեղի-նակն իւր բոլոր ազուսական մտածութիւն-ներովը տակաւին կարող չէ եղած մատան-նիչ ընել այն եղանակն որով աղջիկանք պէտք է պարզեսի երթան։ Ուշադրութիւն ընենք, եթէ մենք աղջիկասէր չերմանք, աղջիկները տղայասէր չեն, ի՞նչպէս ամուս-նութիւնք հնարաւոր կ'ելլան այս անշուն ծերամաւալ քաղքին մէջ ուր այնքան հաղ-ուագէպ են զիրար տեսնելու առիթներ։ Ասոդ է որ հնարաւոր է երեկոյթներ տար-քել ուր երիտասարդ ք կուգան իրենց չնորհ-ները և հրապոյրները փայլեցնել գեղեցիկ օրիորդն աչաց ներքեւ, և սակայն ս'ոքան անտեղութիւնք, ի՞նչքան տարաձայնու-թիւնք, մանաւանդ թէ մենամարտութիւն մը իսկ կրնայ ծագիլ, և յետոյ եթէ ոչ մին կրցաւ հրապուրել աղջիկն, որպէս կը փա-փաքին ծնողք, կարելի չէ նոր երեկոյթ մը տալ, նոր հրաւէրներ ընել։ Բայց ամսան ան-դիմակ պարահանդէսը հրաշալի գիւտ մ'է այդ անտեղութիւնները բառնալու և թոյլ չտալու որ արիւնները լճացեալ մնան։

Բայց խնդիր մ'է գտնել թէ՝ երիտա-սարդք ս'ոքիսի յատկութեամբք պարտին օժտեալ լինիլ որպէս զի կարենան աղջկանց հաճոյ լինիլ։ Հարցը բաղմանշիրն է։ զայն լուծելու համար խորին ուսումնասիրութիւն պէտք է։ մենք առայժմ մէկ կէտի վրայ ուշադրութիւն կը դարձնենք։ կ'ենթադրենք թէ երիտասարդք կը տենչան բարձրանալ այն աղջկանց որոց գերը, չնորհն և կրթ-ութիւնը բարեխառնեալ է մարդկային եր-ջանկութիւնն յարդ արող գերազոյն զորու-թեամբք այսիրն ոսկով։ Ուրեմն ամէն ի-մաստուն երիտասարդ պէտք է որոնէ նախ թէ՝ ո՞ր յատկութիւն անդիմադրելի հրապոյր կ'ընծայէ այդ օրինակ աղջկանց։ Ամէն ի-մաստուններու կարծեօք, ո՛չ մի աղջիկ, եթէ կուզէք ըսել ո՛չ մի կին եւս կարող է դի-մադրել երիտասարդի մը որ զինքն իւր թեւ-երուն մէջ առած իրր թեթեւ փետուր մը կը թռցնէ, կը մոլորեցնէ։ Կիները, ըստ մեր նոր բարուց, գանոնք միայն կը սիրեն որք անմեղութեամբ զիրենք կը մոլորեցնեն։ Ո՞ր-քան երիտասարդներ գիտեմ այք եթէ փո-խան այնքան լեզուներու և գիտութեանց գիտնային լաւ վարել, աքանչելի ապագայ մը իրենց պատրաստած պիտի լինէր։

Հաւէվն կ'ըսէ թէ՝ ամուսնութեան խրն-դիրն անձուկ կերպով կապուած է պարե-լու խնդրոյն հետ։ Մեր ազգային փոր-ձառութիւնն ալ ապացոյց է այսմ։ Նոքա այք պիտի պարտասեն մեր գարոցաց ծը-ռագիրները, անոնց մասնաւոր ուշադրու-թիւնը կը հրաւիրենք այս կենսական խնդ-րոյն վրայ։ Ահա դիտութիւն մը որ առանց ոՀԻՆԻՆի կը վերջանայ եւ ամէն ոՀԻՆՆԵՐէ աւելի օգտակար է։ ընկերութեան կեն-դանի պատկերը պիտի դնեն, և կը դիմեն ամէն անոնց յորոց կրնան օգտուիլ։

Անոնք որ կ'ըզման հարակ չլինել իրենց սպասաւորներու բարքանչանաց, միակ միջոց մը ունին իրենց նպատակին հասնելու, այն է որքան հնար է շուտ հարստացնել ծա-ռայներն և անմիջապէս շրջենաւ դնելով հայրենիք ուղեւորել։

Բայց որքան ալ դերերը փոխուած լինին, բայց և այնպէս կարծեմ թէ խոհե-մութիւնը կը պահանջէ —ինչպէս նաեւ սե-ռին պատիւը — որ երիտասարդք փոքր ինչ յատակնութիւն ունենան. չպարտուինք, այլ է յատակնութիւն ունենալ, այլ է յատակ-նում լինելն. ուրեմն եթէ անանք այս տարբ-երական ճշմարտութեան, կը պարտինք պա-ղելու երթալ միասին տանելով մի քանի թեթեւներ որոց ճշմարտութիւնը փորձառա-կան կերպով պէտք է ուսնինք։ Յուլիս 14ի գիշերն երբ պիտի գնայինք Պեշիւքթաշէ, մի քանի ընկերներ նախ օգտակար համարե-ցին հայտնելով աչքէ անցնել ինչ խրատներ որ արուեստին հմուտ անձինք չնորհած են անտիրմնեներու։ —Ցեւանք որ չատ բան մենք ալ արդէն գիտինք. սակայն երկու յոր-դորներ անօգուտ չենք համարիր յառաջ բե-րել, որով կ'ապացուցանենք անդիմակ պա-րահանդիսի մը քանի մը առաւելութիւններն ևս։

Ճաշակի տէր երիտասարդք — եւ հա-ւանօրէն գտնուելու են — պարտին ի-րենց էն ճարտար թշնամին համարել... գերձակուհիներն։ Կատակ չէ ըսածնիս։ «Ա՜հ, գերձակուհիներն։ Կատակ չէ ըսածնիս։ «Ա՜հ, գերձակուհիներն, ի՞նչպէս խորտանգ եղած են. անոնք միայն գիտեն այն գաղտնիքը որպ չնորհիւ կարող լինին ընծայել աղջկան մը մարմնոյն այն չնորհներն որք կը պակսին իրեն։ Անոնք գիտեն նիհարներուն չափա-ւոր գիրութիւն տալ. այո՛, անոնք գիտեն յօրինել ուսեր, մէջքեր, կուրծքեր։ Գիտու-թիւնը, ի՞նչ ըսէ, որած է յառաջադիմու-թիւններ։ Եւ աչքը անոնց գիտութեամբ կը խաբուի. բայց ճարպիկ եւ փոքր պա-ղարտ մը ձեռքերը բնաւ։ Վարպետ պարող մը չատ չնորհալի կերպով կրնայ ուսումնա-սիրել իւր ՏէրոՀ մարմնոյն տկար կողմերն։

Բայց ամուսնութիւնները չատ անգամ եթէ գոհացնեն մեր անձնասիրութիւնն, այն ատեն չենք լինիր չատ պահանջող. բաւա-կան է որ մեր բարեկամք — մանաւանդ մեր թշնամիք — տեսնեն թէ ամենայնելոյ և ամենաչնորհալի կին մ'ունինք —հոգ չէ թէ գերձակուհին Աստուծոյ զլխաւոր ա-խատակիցն եղած լինի. անձնասիրութիւն-նիս գոհ է և այդքանը կը բաւէ։ Սակայն ըն-տանեկան յարկին ներքեւ տաղջ կին մը ո՛ւ է չնորհալի ձեւի, հնա՝ անխոսարկելի է։ Աղջիկ մը չեմ ճանչիր։ կ'ուզեմ գիտնալ նորա կուրծքին վիճակն — զի այդ տեսա-կութիւնը միայն է մայր ամենայն չարաց—, դիմեցէք դարձեալ վալսին։ Անշուշտ դաշ-տային պարահանդիսի մը մէջ մայրերն աւել-ի՛ չնորդամբ են. ուրեմն գրկէ օրիորդը և դարձարէ։ հետեւեալ դեղագիրն.

«Կը վալսես հինգ վայրկեան առանց թոյլ տալու որ օրիորդն ոՀՁ մը ընէ. թէ նա քեզ ըսէ՝ գրաւական է, ալ բաւական է»— գու իբր թէ ինքնիրգի եղած «ա՛հ, ա՛հ, օ՛ր-իորդ, քիչ մը ետս, քիչ մը ետս» կ'ըսես։ Անպէս կը ձեւացնես իրր այն թէ յարբ-ածակեալ ես անոր հետ պարելով։ Պիտի կարծէ աղջիկը թէ իրեն հետ պարելու հա-մար կը խենդեիս։ Այդ մոռացութիւնը պիտի չպէ զլնքն, եթէ պարելը խեղդա-մահ իսկ ընէ։ Երբ այսպէս առանց դադա-րի կը վալսես հինգ վայրկեան, յանկարծ մէ-կէն ի մէկ կանգ առ . . . և

N. 7.

Գաղջնմագ, պաշ թեքի, եմիրազը ծիլտի միւ-չերի վէ սայ տէբքիւմէսի, Իսմռազը մէգքիւբէ Տէլօրթէ մերէՏէմիկի խոթիմլոյը իլէ սերէէն միւն-տէքի օյուբ։ Բարիսատ Գրլբէի օգադրնամ 31 Նուամբրօյու քիմեակիբ Մ. Տէլօրթէ վէ սարը էմ-զանք վէ բէրուքէր տիւքանդարբնաս պուլու-նուբ, գալալընսան սագբնմաղը։ Զանադ ընրն փի լամթը 20 զուրուշ Եարբմ չանանդընն ֆիլտրը 12 զուրուշ։ Տէբտաատէմ տէբօգլիմօսու եարը Նրդ Ղալաթա կէօսիբիլիմնէն գարշրընսաս Մ Զէբվամիրինն մադազասընաս տրը։

N. 4.

Տօպթէօր ֆիլտրէրին իէօպու գանը թէմիզլիյի մի չէքէրլէրի չիմանիկ գասար մալիամ օյան գալ միգալիս չէքէրլէրին էն ալաբը վէ էն էհ լէնի տէրը։ Շուրանալարը իւգէրինէ օյուս գրնի չէքէր գասիմբարընն իւգէրինէ տարմ Եիրանա հիւբիմէն ինին մանի տարկասը մէվ լաբ օրմաբը վէ գէրբինէտի ֆիլտր վէ Պուէթին ին իսկայաբը դբմադը մուրեքքէպլէ մուհարբէր գալալանդը տրը։ Չէր էհգանք վէ տրսկիմիլերա տէ պալանուբը։ Տէբտաատէմ տէբօգլիմօսու եարգիբ Ղալաթա կէօսիբիլիմնէն գարշրընսաս Մ Զէբվամիրինն մադազասընաս տրը։

(ՇԱՔԱՐՈՎ ՊԱՏԱՆ)

ՀԷՑՏՈՓԻ

ՆՈՐ ՓԱՑԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

Աւասիկ ընդհանուր բժշկութեան զարմանալի և արտակարգ գիւտ մը։ Գիտութեան յայտնաւոր-ները —Եգիպտական Հեռագիրք, Շոգի, Տպագրութիւն— յեղափոխեցին երկրագիտ դրու՛թիւնը, և մարդկային կեանքն ընրն լաւագոյն և իմաստնագոյն։ Այսպէս, թէպէտ անհամար Դեղահատներ կան հիւանդութեանց համար, և մեծ արժանիք վերագրելով հանդերձ անոնց, Տոքթոր Հէցտոփի գիւտը նոսմնացուցած է անոնց ամենքն և հիմնած է

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՈՒՐԹԻՒՆ ՄԸ

Բժիշկք, որոց պատուիրած օրկան չորս կամ հինգ դեղահատները կը տիրապետին ստամոքսը և կ'սանդամանութիւնն ապիկները, պիտի կրնան իրենց հիւանդաց առողջութիւն և ախորժակ տալ այս որ-տակագրգ Դեղահատներէն մէկ երկուքով։ ՏՈՔԹՈՐ ՀԷՑՏՈՓԻ ՆՈՐ ՓԱՑԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏԵՐԷՆ մէկ երկու հատը կը բաւէն դնելու համար ստամոքսն կատարեալ կանոնաւորութեան և ախորժակի մէջ, և միտքն պայծառ ու թեթեւ։ Ընելու։ Եթէ փայծերնը տկարացած է իւր գործին մէջ, կը կազ-դուրի, և եթէ Զղային դրութիւնը խանգարուած է, կը վերականգնի։

ՄԱՂԱՁՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՔ

1. Ստամոքսի ծանրութիւն։
2. Ադեսպ ստամոքսին փրք-ախտի պատճառու